# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 18 (1768) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 14, 2016
VOLUME 36, NO. 18 (1768) SATURDAY, MAY 14, 2016

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեան Առաջնորդ Վերընտրուած

Անցեալ Հինգշաբթի եւ Ուրբաթ օրերըԼաս Վեկասի մէջ տեղի ունեցան Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի երեք յատկանշական տարեկան ժողովները:

Առաջինը Հինգշաբթի 5 Մայիս կէսօրէ առաջ Թեմի բոլոր եկեղեցիներու տիկնանց միութիւններու ժողովն էր: Իսկ երկրորդը նոյն օրը կէսօրէ ետք Թեմի հոգեւորականներու ժողովը մասնակցութեամբ 30 եկեղեցականներու:

Երրորդը Արեւմտեան Թեմի 89րդ Թեմական պատգամաւորական ժողովն էր, որ տեղի ունեցաւ Ուրբաթ Մայիսի 6ին, 2016 մասնակցութեամբ շուրջ 130 եկեղեցական եւ աշխարհական պատգամաւորներու, որոնք կը ներկայացնէին բոլոր շրջաններու եկեղեցական հաստատութիւնները:

Պաշտօնական տեղեկագիրներու եւ զեկոյցներու ունկնդրութենէն ու քննարկումներէն ետք ներկաները յառաջիկայ շրջանի գործունէութեանց վերամշակուած ծրագիրը վաւերացուցին: Այնուհետեւ Թեմական ժողովը իր վստահութեան քուէն տուաւ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, յառաջիկայ եօթը տարիներու համար եւս պաշտօնավարելու որպէս Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդը:

Կը շնորհաւորենք Յովնան Սրբազանի վերընտրութիւնը, մաղթելով իրեն քաջառողջութիւն եւ յարատեւութիւն իր եկեղեցանուէր եւ հայրենանուէր գործունէութեանց մէջ:

## Հայաստանի եւ Արցախի Մէջ Նշուեցան Մայիս 9-ի Տօները Յայտարարելով Որ Այս Հանգրուանին Զիջումներ Չկան

Մայիս 9-ին, Հայաստանի եւ Արցախի մէջ տեղի ունեցած զանազան միջոցառումներով նշուեցաւ եռատօնը՝ Արցախի պաշտպանութեան բանակին կազմաւորումը, Շուշիի ազատագրութիւնը եւ ֆաշիզմի դէմ յաղթանակը: Այս առթիւ Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու բարձրաստիճան ղեկավարութիւնը այցելեց Ստեփանակերտ եւ Շուշի, ուր յարգեց Արցախի ազատագրական պայքարի զոհերուն յիշատակը: Այս առթիւ Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեան յայտարարեց, որ այսօր հպարտութեամբ կրնանք հաստատել, որ ունինք մեծագոյն յաղթանակ մը եւս՝ մեր երիտասարդ սերունդի ներկայութիւնը եւ զոհողութիւնները: Ըստ Նախագահին, մեր բոլոր յաղթանակները միասնութեան, վտանգի մէջ յայտնուած հայրենիքը պաշտպանելու գաղափարին շուրջ համախմբուածութեան յաղթանակներ եղած են:

Իսկ Նախագահ Սերժ Սարգսեան, որ եռատօնին առթիւ այցելեց Եռաբլուր ու յաղթանակի զբօսայգի յայտարարեց, որ Շուշին ազատագրողներուն զաւակները 24 տարի ետք կրկնեցին իրենց հայրերուն սխրանքը: Շնորհաւորական ուղերձին մէջ Սարգսեան անդրադարձաւ վերջին զարգացումներուն եւ մերօրեայ հերոսներուն: «Մայիս 9-ն մեզի համար վերահիմնաւորուեցաւ եւ վերարժեւորուեցաւ Շուշիի ազատագրութեամբ: Շուշիի ազատագրութիւնը մեր կեանքի եւ մահուան հարցն էր: Մերօրեայ հերոսները ապացուցեցին, որ հայ ժողովուրդի իւրաքանչիւր սերունդ պատրաստ է



Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու ղեկավարութիւնը Ստեփանակերտի մէջ տեղի ունեցած տօնակատարութեան ընթացքին

աւելի վստահօրէն պաշտպանելու անվտանգութիւնն ու խաղաղութիւնը«, հաստատեց Սարգսեան:

Այս առթիւ Արցախի պաշտպանութեան բանակի հրամանատար զօրավար Լեւոն Մնացականեան յայտարարեց, որ այս հանգրուանին զիջում չկայ, նաեւ զիջումներու մասին խօսք իսկ չի կրնար ըլլալ: Ան հաստատեց, որ սահմանային շփման գիծը կը գտնուի հայկական ուժերու վերահսկողութեան տակ: Իսկ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան յայտարարեց, որ հայկական կողմը մօտէն կը հետեւի ատրպէյճանական զինուորական կուտակումներուն եւ կ'առ-

Շար.ը էջ 5

## Պատմական Օրեր Լաս Վեկասի Մէջ Հայ Գաղութը Ունեցաւ Իր Նոր Եկեղեցին Եւ Անուանակոչուեցաւ Սբ.Կիրակոս



Եկեղեցւոյ օծումէն ետք Սրբազան Հայրը եւ բարերար Մարք Կիրակոս խաղաղութեան սպիտակ աղաւնիներ արձակելու պահուն

Անցնող շաբաթավերջին Լաս Վեկասի նորահաստատ հայ գաղութն ապրեցաւ պատմական չորս օրեր:

Հինգշաբթի Մայիսի 5ին տեղի ունեցաւ խաչքարերու օծում նորակառոյց եկեղեցւոյ համալիրին մէջ: Արարողութեանց նախագահեց Արեւմտեան Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, ներկայութեամբ բազմահարիւր հաւատացեալներու:

Ուրբաթ Մայիս 6ին կատարուեցաւ սուրբ սեղանի եւ 16 սիւներու օծում: Այս առթիւ եկեղեցին անուանուեցաւ «Ս. Կիրակոս» անունով, ի յիշատակ եւ յաւերժացումն գլխաւոր բարերար իրաւաբան Մարք Կիրակոսի ընտանիքի:

Նոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ ճաշկերոյթ հանդիսութիւն Ս. Կիրակոս եկեղեցւոյ օծման առթիւ: Սոյն միջոցառումին ներկայ էին Լաս Վեկասի մօտ Հայաստա-

Շար.ը էջ 5

## ՄԻԱՑԵԱԼ ԿՈՉ

### Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի Հայկական մեծագոյն կազմակերպութիւններուն կողմէ

Այս տագնապալի օրերուն, երբ Արցախի մէջ հայ զինուորը կենացմահու կռիւ կը մղէ՝ պաշտպանելու մեր Հայրենիքը Ազրպէյճանի բարբարոս հրոսակախումբերուն դէմ,

Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի հայկական յարանուանութիւնները, կազմակերպութիւնները եւ միութիւնները կը յայտարարեն.

ԳՈՐԾԵԼՈՎ համահայկական միասնութեան ոգիով,

ՀՌՉԱԿԵԼՈՎ, որ իւրաքանչիւր հայու համար Արցախի անվտանգութիւնը անվիճելի եւ բացարձակ արժէք է,

ՃԱՆՉՆԱԼՈՎ Արցախի պետականութեան կայացման եւ ամրապնդման գործին մէջ հայկական Սփիւռքի մեծագոյն կառոյցները ի մի խմբող «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի քառորդ դարու շարունակուող բացառիկ եւ յոյժ կարեւոր դերը,

ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՆՔ մեր միաձայն աջակցությունը «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի առաքելութեան ու նպատակներուն,

ԵՒ

ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵՆՔ առատաձեռն մասնակցութիւն բերելու «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին կողմէ կազմակերպուած միասնական հեռուստամարաթոնին, որ կը հեռարձակուի Լոս Անճելըսի հայկական բոլոր պատկերասփիւռի ալիքներէն Շաբաթ, 14

Շար.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Է՞լ ինչ անեն առաջնագծի զինուորները. Սարսափելի մանիպուլիացիայի հետեւանքները

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Յաղթանակի տօնի առիթով, Ապրիլի 2-ին Ատրպէյճանի սանձազերծած պատերազմական գրոհը կասեցրած մի շարք զինծառայողների, այդ թւում նաեւ յետմահու, շնորհուել է Արցախի հերոսի կոչում: Այդ տղաները, նրանցից շատերը կեանքի գնով, պաշտպանել են Արցախն ու Հայաստանը, կասեցրել են քանակական եւ ռազմատեխնիկական զգալի առաւելութիւն ունեցող հակառակորդին, որը չորս օր անց խնդրում էր այդ զինուորներին կանգնել տեղում, չգալ առաջ:*

*Երբ այսօր լրագրողները հարցուփորձ են անում տղաներին իրենց արածի վերաբերեալ, նրանք իրենք էլ թերեւս չպատկերացնելով, թէ ինչ ապշեցուցիչ պատմութիւններ են ներկայացնում, ընդամէնը համեստօրէն խօսում են, թէ արել են այն, ինչ պէտք է անէին, ինչ պարտաւոր էին անել, ինչ չանելը չէին պատկերացնում:*

*Այդ ամէնին զուգահեռ, հետաքրքրական խօսակցութիւններ են ծաւալւում թիկունքում, որոնք յատկապէս աշխուժացան Արցախի անկախութեան ճանաչման նախաձեռնութեամբ: Շատերը կողմ են, շատերը համարում են, որ դա կենսական անհրաժեշտութիւն է, իսկ շատերն էլ դէմ լինելով, դա համարում են վտանգաւոր արկածախնդրութիւն: Այդ փաստարկների հիմքն այն է, որ միջազգային հանրութիւնը, Մինսկի խմբի համանախագահ երկրները չեն ընդունի, չեն հասկանայ, կը մերժեն Հայաստանի նախաձեռնութիւնը, հարուածի տակ կը յայտնուեն Հայաստանն ու Արցախը, դա կը լինի պատերազմ յայտարարել բոլորին եւ այլն:*

*Ինչ խօսք, որեւէ բան չի կարող լինել աներկբայ ճշմարտութիւն, եւ պէտք է քննարկել Արցախի ճանաչման նպատակայարմարութիւնը եւ հնարաւոր ռիսկերը: Ռիսկ պարունակում է ցանկացած քայլ, անգամ խոհանոցում աղցան պատրաստելը:*

*Ուշագրաւ է սակայն փաստարկային հիմքը: Առայժմ, բացի նրանից, որ «միջազգային հանրութիւնը չի հասկանայ եւ չի ընդունի», այլ հիմք կարծես թէ չկայ: Օրինակ, այդպիսի մի հիմք էլ օրերս ռազմարդիւնաբերութեան հեռանկարների մասով բերել էր ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսեանը, ասելով, թէ ամէն «քոսոտ» երկրի չեն թողնի մուտք գործել այդ ասպարէզ եւ կը տան քթին: «Միջազգային հանրութիւնը չի հասկանայ եւ չի ընդունի» արտայայտութիւնը նոյն կարգից է, նոյն կենսափիլիսոփայութիւնից, պարզապէս տարբեր է բառերի ընտրութիւնն ու դրանցով «փակուող» թեման:*

*Հիմա պատկերացնենք, որ այդ նոյն կենսափիլիսոփայութեամբ են առաջնորդւում առաջնագծի զինուորը եւ սպան, դրանով էին առաջնորդւում տղաները, որոնց վրայ էր ընկել բազմամիլիարդ արդիական սպառազինութեամբ յագեցած ատրպէյճանական ռազմական մեքենան: Այդ դէպքում ոմանց քթին հաստատ կը հասցնէին, բայց արդէն ատրպէյճանցիները, որոնք դժուար է ասել, թէ մինչեւ Երեւան ճանապարհին որտեղ կանգ կ'առնէին, կամ նրանց որտեղ կը կանգնեցնէր «միջազգային հանրութիւնը»:*

*Բայց, տղաները բարեբախտաբար չմտածեցին, որ «քոսոտ» սպառազինութեան տէր են Ատրպէյճանի միլիարդների համեմատ, չմտածեցին «քթին չստանալու» մասին եւ իրենք հասցրին հակառակորդի քթին, այն էլ այնպէս, որ յետոյ ատրպէյճանցիներն էին խնդրում կրակի դադարեցում:*

*Ի՞նչ է միջազգային հանրութիւնը, ովքե՞ր են կազմում այն, ի՞նչ կանոններ են գործում այդ հանրութեան համար: Հայաստանի հասարակութիւնն իմաստաւորե՞լ է այդ հարցերն ու պատասխանները, մինչ այդ «հանրութեանն» անընդհատ յղումներով պայմանաւորելով սեփական քայլերը:*

*Մի՞թէ բազմաթիւ օրինակները չեն վկայում, թէ մեր իսկ ապրած օրինակները, թէ այլոց օրինակները, որ միջազգային հանրութիւն ասուածը ռոբոտ չէ, այլ յարաբերութիւնների միջավայր, որտեղ հետապնդւում են սուբիեկտային շահեր: Հետեւաբար, միջազգային հանրութիւնը պէտք է ընկալուի ոչ իբրեւ մի դատարան, որտեղ քննելու են մեր գործերը, այլ մի հարթակ, որտեղ մենք ունենք գործ անելու եւ հարց լուծելու հնարաւորութիւն:*

*Իսկ ի՞նչ է նշանակում գործ անել ու հարց լուծել: Դա նշանակում է նախ եւ առաջ ձեւակերպել սեփական շահը, անվտանգութիւնը, դրա համար անհրաժեշտ անելիքները:*

*Այսինքն, այն, ինչ պէտք է անել, որոշւում է ոչ թէ միջազգային հանրութեամբ չափումով, այլ նրանով, թէ ինչ ռիսկեր կան շահի ու անվտանգութեան տեսանկիւնից եւ ինչ է պէտք անել դրանք կարճաժամկէտ, միջնաժամկէտ եւ ռազմավարական հատուածում չէզոքացնելու համար: Միջազգային հանրութիւնն այն տեղն է, որտեղ այդ ամէնը գնահատուելուց յետոյ սկսւում է ծաւալուել աշխատանքը դիւանագիտական, քաղաքական, տնտեսական, նոյնիսկ մշակութային լծակներով:*

*Ըստ այդմ, եթէ բանը հասել է քննարկման, ապա պէտք է քննարկուի ոչ թէ այն, որ պէտք չէ անել բաներ, որ միջազգային հանրութիւնը չի ընդունի, այլ պէտք է քննարկուի այն, թէ ինչպէս անել, որ միջազգային հանրութիւնն ընդունի այն, ինչ մեզ է պէտք եւ ինչի կապակցութեամբ մենք կայացրել ենք որոշումներ:*

*Այստեղ է առանցքային կէտը,*

*Շար.ը էջ 19*

# Ինչո՞ւ Պուտինն Ու Լաւրովը Չեն Մեկնում Ստեփանակերտ

*ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ*

*ԼՂՀ ԱԳՆ-ի մամուլի քարտուղար Անի Սարգսեանը օրերս մեկնաբանել էր դէպի ԼՂՀ եւ Ատրպէյճանի զինուած ուժերի շփման գիծ Ատրպէյճանում հաւատարմագրուած դիւանագիտական կորպուսի ներկայացուցիչների այցի կազմակերպումը Ատրպէյճանի ԱԳՆ կողմից: «Ապրիլի սկզբին ատրպէյճանա-ղարաբաղեան հակամարտութիւնը ուժային ճանապարհով լուծելու փորձի ձախողումից յետոյ Ատրպէյճանը ձգտում է կեղծիքի եւ մեքենայութիւնների միջոցով իրեն ներկայացնել որպէս զոհ եւ խուսափել պատասխանատուութիւնից՝ ռազմական ագրեսիայի սանձազերծման ու դրան ուղեկցող բազմաթիւ ռազմական յանցագործութիւնների համար: Մասնակցելով ատրպէյճանական կողմի վատ բեմադրուած ակցիաներին՝ միջազգային հանրութեան ներկայացուցիչներն ակամայից թոյլ են տալիս իրենց ներքաշել պաշտօնական Պաքուի քարոզչական արշաւին՝ ուղղուած Ատրպէյճանի իշխանութիւնների յանցաւոր գործունէութեան արդարացմանը: Համոզուած ենք, որ առեղծուած իրավիճակի վերաբերեալ իսկապէս օբյեկտիւ պատկերացում կազմելու եւ ատրպէյճանական ագրեսիայի պատճառների եւ հետեւանքների մասին բազմակողմանի տեղեկատւութիւն ստանալու համար դիւանագէտները եւ միջազգային կազմակերպութիւնների ներկայացուցիչները պէտք է, առաջին հերթին, այցելեն հենց ԼՂՀ»:*

*Ինչու՞ ՀՀ ԱԳՆ-ն իր ղեկավար՝ Էդուարդ Նալբանդեանը ՀՀ-ում հաւատարմագրուած դեսպանների այց չի կազմակերպում շփման գիծ... Օր ու գիշեր ատրպէյճանական կեղծիքների մասին երկարաշունչ ելոյթներ ունենալու փոխարէն, կարելի է դեսպաններին ուղեկցել շփման գիծ ու ԼՂ՝ ամէն ինչին տեղում ծանօթանալու համար:*

*Ու առհասարակ՝ ինչու՞ ՀՀ ղեկավարութիւնն իր առջեւ խնդիր չի դրել Լաւրովին, Մեդվեդեւին, ինչու չէ՞՝ Պուտինին Ստեփանակերտ հրաւիրել: ԼՂ միջազգային ճանաչման մասին յայտարարութիւնները հիմա էլ միայն օդո՞ւմ են լինելու:*

*Յայտնի են դարձել ապրիլեան մարտերի ընթացքում Ատրպէյճանի իրական կորուստները: Ըստ Artsakhpress-ի՝ ԼՂ-ի դէմ Ապրիլի սկզբին սանձազերծուած լայնամասշտաբ ռազմական գործողութիւններում Ատրպէյճանի կորուստները մինչ վերջերս գնահատւում էին մօտ 180-200 զոհուածներ, այդ թւում՝ մօտ 30 յատուկ ջոկատայիններ, երկու ուղղաթիռ, երեք տանկ եւ երկու անօդաչու թռչող սարք: Սակայն OSTKRAFT վերլուծական կեդրոնի աղբիւրների կողմից բերուող փաստաթղթերով՝ Ատրպէյճանի իրական կորուստը կազմել է գրեթէ 800 մարդ:*

*OSTKRAFT-ը համոզմունք է յայտնում, որ հենց կորուստների այդ չափն է Ատրպէյճանի ղեկավարութեանը հարկադրել կանգնեցնել ագրեսիան եւ վերադառնալ բանակցութիւնների սեղան: «Հաշուի առնելով այդ տուեալները՝ խորապէս չհիմնաւորուած են երեւում ՌԴ-ում Ատրպէյճանի դեսպան Փոլադ Բիւլբիւլօղլիի այն յայտարարութիւնը, թէ «Պաքուն պատրաստ է ԼՂ-ի խնդիրը լուծել ռազմական ճանապարհով», քանի որ ԼՂ-ի խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու համար Ատրպէյճանը ոչ ուժեր, ոչ էլ միջոցներ չունի»,-նշում է վերլուծական կեդրոնը՝ ընդգծելով, որ միակ բանը, որ Թուրքիայի օգտին իր չմտածուած գործողութիւններով հրահրել է Ատրպէյճանը, դա Հայաստանի կողմից ԼՂ-ի հնարաւոր ճանաչումն է:*

*OSTKRAFT վերլուծական կեդրոնը յիշեցնում է, որ Ապրիլի սկզբին ԼՂ հակամարտութեան գօտում լուրջ մարտական բախումներ են տեղի ունեցել Ատրպէյճանի ԶՈւ եւ ԼՂ-ի միջեւ, ինչի համար է՛ւ Հայաստանում, է՛ւ ԼՂ-ում Ատրպէյճանի զինուած ուժերին մեղադրել շփման գծի հարաւային, հարաւ-արեւելեան եւ հիւսիս-արեւելեան ուղղութիւններով յարձակում գործելու մէջ: Ատրպէյճանը մինչ այժմ չի հրապարակել Ապրիլի սկզբին ԼՂՀ-ի դէմ իր ագրեսիայի արդիւնքում կրած կորուստի իրական չափը:*

*Meydan TV-ն իր հետազօտութիւնների արդիւնքներով յայտնել է, որ ատրպէյճանական կողմի կորուստը կազմում է 101 զինծառայող եւ միաժամանակ նշել, որ այդ թիւը կարող է շատ աւելի մեծ լինել: Միջազգային Bellingcat վերլուծական խումբը յայտնել էր, որ Ապրիլի 1-5-ին Ատրպէյճանի կորուստն, իր «գդուշաւոր գնահատականներով», նուազագոյնը 400 զինծառայող է: Իսկ ԼՂՀ ՊԲ տուեալներով՝ Ապրիլի 1-5-ին ԼՂՀ դէմ ռազմական սադրանքին հայկական կողմի ջախջախիչ հակահարուածի արդիւնքում Ատրպէյճանը կորցրել է 2 ուղղաթիռ, 24 տանկ, 6 զրահապատ մեքենայ, 12 անօդաչու թռչող սարք, 1 ինժեներական մեքենայ, 1 ՏՕՍ-1Ա հրանետ, 1 ՀՄՄ, 1 «Գրադ» ՀԿՌՀ: Մարտական գործողութիւնների ընթացքում ատրպէյճանական զինուժը տուել է աւելի քան 500 կորուստ, մօտ 2000 վիրաւոր:*

*«ՀԱՅԵԼԻ»*


**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀՀԿ-ական Պատգամաւորնե՞րն են Տարածել Սէյրան Օհանեանի Հետ Փակ Հանդիպման Մանրամասները



ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Վահրամ Բաղդասարեան

*Ես կիսում եմ պաշտպանութեան նախարարի մտահոգութիւնը՝ կապուած ԱԺ-ում փակ նիստի մանրամասները մամուլին հասցնելու հետ, որը նաեւ ՀՀԿ խմբակցութեան նիստի ժամանակ եմ ասել: Այս մասին ԱԺ-ում լրագրողների հետ զրոյցում նշել է ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Վահրամ Բաղդասարեանը:*

*«Ես չեմ ուզում տարանջատում դնել, որովհետեւ հանդիպմանը ներկայ են եղել եւ՛ ՀՀԿ պատգամաւորներ, եւ՛ տարբեր խմբակցութիւնների ղեկավարներ, յանձնաժողովի նախագահներ, եւ պաշտպանութեան յանձնաժողովի անդամները: Այնքան նեղ է եղել շրջանակները. Շատ ցաւում եմ, որ ոչ միայն այնտեղի տեղեկութիւնն է դուրս հանուել, այլեւ պարզ ձայնագրութիւն են տուել, որը անթոյլատրելի է պարզապէս»,- ասաց նա՝ յաւելելով, որ եթէ այդտեղից տեղեկատուութիւնը դուրս է գալիս, հնարաւոր չէ անկեղծ խօսակցութիւն լինի:*

*Վահրամ Բաղդասարեանը չցանկացաւ յայտնել իր կասկածների մասին. «Չեմ ուզում որեւէ մէկի մեղքը վերցնել եւ ինչ-որ մէկին մատնացոյց անել, բայց դա այնպիսի բան է, որ գաղտնիք մնացող չէ»:*

*Հարցին՝ ՀՀԿ պատգամաւորներին չի՞ կասկածում, Բաղդասարեանն արձագանքեց. «Չեմ կարծում, բայց սա չի նշանակում, որ ես մեղքը գցում եմ միւս պատգամաւորների վրայ: Ցամենայնդէպս երեւոյթը բաւականին տհաճ է, առաւել եւս, որ դա վերաբերում է ԼՂ խնդրին: Կարծում էք, ես հիմա պէտք է անուննե՞ր տամ, ենթադրութիւններ անե՞մ»:*

*Ինչ վերաբերում է նրան, թէ ինչ նպատակ էին հետապնդում տուեալ պատգամաւորները նման քայլ անելով՝ Վ. Բաղդասարեանն այսպէս արձագանքեց. «Ընդամէնը մամուլի հետ իրենց յարաբերութիւնները բարձր պահելու եւ նրանց դուր գալու համար են արել, երեւի: Չեմ ուզում աւելի վատ բաներ ասել, որ յատուկ նպատակով այս ինֆորմացիան դուրս են հանել, որ հասնի մեր թշնամիներին, եւ այլն»:*

*Աւելի վաղ* NEWS.am*-ը յայտնել էր, որ Ազգային ժողովում փակ հանդիպումից յետոյ ԱԺ որոշ պատգամաւորներ մամուլին էին փոխանցել հանդիպման մանրամասները: «Սա է մեր իրականութիւնը: Այն մարդիկ, որոնք ամբողջութեամբ փորձել են պատմել, հենց նրանց հետ մենք ճանապարհ չունենք անցնելու, ինչի ուղղութեամբ համապատասխան աշխատանքներ են տարւում»,- նախօրէին լրագրողների հետ զրոյցում ասել էր պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը:*

## «Ղեկավարութիւնը Պէտք է Փորձի Վերացնել Նաեւ Առաջնագծի Թերացումները».- Պաշտպանութեան Նախկին Փոխնախարար



Պաշտպանութեան նախկին փոխնախարար Անդրանիկ Քոչարեան

*Պաշտպանութեան նախկին փոխնախարար Անդրանիկ Քոչարեանը ռազմական ղեկավարութեան առանցքային պաշտօնեաներին պաշտօնանկ անող իշխանութեանն առաջարկում է վերացնել նաեւ առաջնագծում առկայ թերացումները: Այս մասին* NEWS.am*-ի հետ զրոյցում Անդրանիկ Քոչարեանը նշեց՝ անդրադառնալով ՀՀ պաշտպանութեան նախարարի տեղակալ, նիւթատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ալիկ Միրզաբեկեանի, ՀՀ ԶՈՒ գլխաւոր շտաբի հետախուզութեան վարչութեան պետ Արշակ Կարապետեանի եւ ՀՀ ԶՈՒ կապի զօրքերի պետ, կապի եւ ավտոմատացուած կառավարման համակարգերի վարչութեան պետ Կոմիտաս Մուրատեանի պաշտօնանկութեանը:*

*«Եթէ պաշտօնանկութիւններ են արել, նշանակում է՝ հիմքեր ունէին, բայց ինձ համար շատ կարեւոր են նոր նշանակումները, որոնք այս պահի դրութեամբ դեռ չկան: Իսկ նշանակումները պէտք է բերեն այդ խնդիրների, թերացումների վերացմանը, եւ նոր մարդկանց ի յայտ գալը, փոփոխութիւնների հեռանկարը պէտք է տեսանելի լինեն հասարակութեան համար»,- ասաց Քոչարեանը:*

*Նրա խօսքով, պետութեան համապատասխան մարմինների գործառոյթն է նաեւ պաշտօնեաներին քրէական պատասխանատուութեան ենթարկելու հարցը. «Խնդիրը պէտք է լուծել իրաւական ճանապարհով, եթէ հիմքեր կան, դրա համար պետութիւնը համապատասխան կառոյցներ ունի՝ զինուորական դատախազից մինչեւ քննութիւն իրականացնող մարմիններ: Կառաջարկէի, որ նոյն ղեկավարները փորձէին վերացնել նաեւ առաջնագծում թերութիւնները, եթէ դրանք այդքան ակնառու են»:*

*Ըստ նախկին փոխնախարարի, այդ թերութիւնները իւրաքանչիւրն իր օղակում կարող էր վերացնել ու ուժեղանալ, քանի որ այս հանգիստ վիճակն այլեւս Հայաստանը չի ունենալու՝ մինչեւ վերջնական խաղաղութեան պայմանագրի ստորագրումը:*

## Մոնիտորինգի Յանձնաժողովի Համազեկուցողների Այցից Իշխանութեան Եւ Ընդդիմութեան Ակնկալիքը Տարբեր Է

*Մոնիտորինգի յանձնաժողովի Հայաստանի հարցով համազեկուցողները այցի ընթացքում, ԵԽԽՎ-ի պաշտօնական կայքի փոխանցմամբ, Երեւանում կը քննարկեն սահմանադրական փոփոխութիւններին յաջորդած քայլերը, ընտրական բարեփոխումներն ու կոռուպցիայի դէմ պայքարին վերաբերող հարցեր:*

*«Բնականաբար, տեղեակ ենք պահելու այդ խնդրի շուրջ: Բոլորն էլ սպասում են կոնսենսուսի: Առանց կոնսենսուսի ոչ մի լաւ զարգացում չի լինի ո՛չ Հայաստանում, ո՛չ էլ միջազգային հանրութեան կողմից: Չի ընկալուի: Դրա համար, այո, շատ կարեւոր է, որ բոլորը հասկանան եւ իմանան, թէ Ընտրական օրէնսգրքի շուրջ կոնսենսուսի ձեռք բերման գործընթացը ինչ վիճակում է գտնւում», - նշեց ՀԱԿ պատգամաւոր Լեւոն Զուրաբեանը:*

*Իսկ ՀՀԿ-ական Հերմինէ Նաղդալեանն ասաց - «Սահմանադրական բարեփոխումների ժամանակ մենք եւս ունեցել ենք այս պահը, երբ որ կար կոնսենսուս, կար լայն կոնսոլիդացիայի գաղափար եւ կար նաեւ մեր օպոզիցիոն գործընկերների կողմից միտում լայն կոնսոլիդացիան ներկայացնել որպէս ամբողջական համաձայնութիւն մէկ երեւոյթով, մէկ բանաձեւով հանդէս գալու: Ես, անկեղծ ասած, մտածում եմ, որ սա չէ կոնսենսուսը, ոչ էլ կոնսոլիդացիան է դա: Որովհետեւ դա, իմ կարծիքով, աւելի շատ նման է ամբողջատիրական հասարակարգին կամ պետական կարգերին, երբ որ վերեւից իջեցւում է մի հատ կարծիք, որին բոլորը հաւանութիւն են տալիս»:*

*Զուրաբեանը հակադարձում է՝ իշխանութիւնը կարող է կարծել, թէ ամէն ինչ կարող է մարսել, բայց քառօրեայ պատերազմից դասեր պէտք է քաղի. - «Կոչ կ՛անէի զերծ մնալ ամպագոռգոռ, ինքնավստահ յայտարարութիւններից: Այնուամենայնիւ, եթէ ուզում էք, կոնսենսուսը Ընտրական օրէնսգրքի հարցում ունի նաեւ Հայաստանը կանոնացնելու խնդիր, ամրապնդելու Հայաստանի դիմադրողականութիւնը ապագայ գործընթացներում: Այնպէս որ, եթէ ունեն պետական մտածողութիւն, թոյլ չեն տայ իրենց նման յայտարարութիւններ, որ իբր արդէն կոնսենսուսը ապահովուած է, եւ մենք բանակցելու բան չունենք»:*

*«4+4+4-ը դա միակ բանավիճային կամ համագործակցային ձեւաչափը չի եղել: Եղել են բազմաթիւ հնարաւորութիւններ ու բազմաթիւ ձեւաչափեր, որոնց միջոցով բոլորն էլ կարողացել են, հնարաւորութիւն են ստացել աշխատելու, ներկայացնելու իրենց առաջարկները, ներկայացնելու իրենց հիմնաւորումները, բանավիճելու: Այդ բանավէճի արդիւնքում է ձեւաւորուել այս կամ այն հարցը», - իր հերթին հակադարձեց Նաղդալեանը:*

*Խորհրդարանական ընդդիմադիր ու իշխանական խմբակցութիւններից բացի, հանդիպումներ են նախատեսուած Հայաստանի նախագահի, վարչապետի, կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարարի, արդարադատութեան նախարարի, գլխաւոր դատախազի, բարձրաստիճան պաշտօնատար անձանց էթիկայի յանձնաժողովի նախագահի հետ, ինչպէս նաեւ՝ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչների հետ:*

## Ընդդիմադիրները Կուտակային Վճարումների Յետաձգումը Կապում Են ընտրութիւններին

*Ընդդիմադիր պատգամաւորների համոզմամբ, կառավարութիւնը փորձում է ընտրական տարում խուսափել բողոքի ակցիաներից, ուստի մասնաւոր հատուածի աշխատողներին 2017-ի փոխարէն 2018-ի Յուլիսի մէկից կը ստիպի միանալ կուտակային կենսաթոշակային համակարգին:*

*Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարն ընդդիմադիր պատգամաւորներին չհամոզեց, թէ բացառապէս հարկային նոր օրէնսգրքով է պայմանաւորուած պարտադիր սոցիալական վճարների մէկ տարով յետաձգումը:*

*Արտեմ Ասատրեանի բացատրութիւնը, թէ հարկային նոր օրէնսգրքին են սպասում, առաջացրեց անկախ պատգամաւոր Էդմոն Մարուքեանի տարակուսանքը - «Հարկային օրէնսգիրքը ի՞նչ կապ ունի: Կամ երբ օրէնքը ընդունում էինք՝ Կուտակային կենսաթոշակայինի, ինչո՞ւ այն ժամանակ շտապ ընդունեցինք, սկսեցինք մարդկանցից փողերը հաւաքել՝ պետական սեկտորի մասին է խօսքը գնում: Եթէ դա է, ուրեմն դուրս է գալիս այստեղ խտրական բան կայ նաեւ պետական հիմնարկներում աշխատող մարդկանց ու մասնաւոր սեկտորում աշխատող մարդկանց միջեւ»:*

*Խտրական վերաբերմունքի թեման շարունակեց «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան ղեկավար Նաիրա Զոհրաբեանը - «Ինչո՞ւ պիտի մասնաւորը, որը հնարաւոր է եւ միանշանակ է, որ կրկին բողոքի ալիք պիտի բարձրացնեն, ստանայ արտօնութիւն, իսկ պետականը, որտեղ վստահաբար բոլորն էլ դժգոհ են համակարգից, բայց աշխատանք կորցնելու գնով մարդկանց պարտադրուել է այս համակարգը, շարունակուի նրանց համար գործել այս անընդունելի համակարգը»:*

*Դրութիւնը վկայակոչելն ընդամէնը քողարկուածկոյթ էգ - «Իրականում բոլորս էլ հասկանում ենք, որ դուք էլ էք գիտակցում Հայաստանում ստեղծուած ծանր սոցիալական վիճակում նման պարտադիր վճարների կիրառման անհնարինութիւնը: Դուք էլ էք հասկանում, թե դժգոհութեան ինչ մեծ ալիք դա կ՛առաջացնի եւ այս քայլով խոստովանում էք, որ այն մարսել չի լինի»:*

*Ամենայն հաւանականութեամբ արտահերթ այս նիստում օրէնսդրական փոփոխութիւնը կը դրուի քուէարկութեան:*

# ԼՈՒՐԵՐ

## Արա Գոչունեան.- «Դաւութօղլուի Հրաժարականը Չի Ազդի Հայ Համայնքի Վրայ»

Թուրքիայի վարչապետ Ահմէտ Դաւութօղլուի հրաժարականը չի ազդի այնտեղ ապրող հայկական համայնքի վրայ ո՛չ դրական, ո՛չ էլ բացասական ձեւով: Այս մասին յայտարարել է Ստամբուլում հայկական «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գոչունեանը:

Նրա խօսքով Թուրքիայում ճգնաժամ չկայ: «Երկրում ընդամէնը որոշակի անհատներ են փոխւում: Կայ քաղաքական գիծ, որի հիման վրայ այդ քայլերը կատարւում են»,- նշել է Արա Գոչունեանը:



Պոլսոյ «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գոչունեան

Մայիսի 5-ին Թուրքիայի վարչապետ Ահմէտ Դաւութօղլուն յայտնել է, որ չի մասնակցելու «Արդարութիւն ու Զարգացում» իշխող կուսակցութեան ղեկավարի պաշտօնի նոր ընտրութիւններին: Դաւութօղլուն նշել է, որ կը շարունակի կատարել իր պարտականութիւնները որպէս Գոնիայի պատգամաւոր, որից յետոյ կը լքի վարչապետի պաշտօնը:

## Օրհան Փամուկ. Թուրքիայում վախի մթնոլորտ



Նոբելեան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկ

Իտալիայում լոյս տեսնող La Repubblica օրաթերթի թղթակից Մարկօ Անսալդոյի հետ զրոյցում թուրք գրող, Նոբելեան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկն ասել է, որ Թուրքիայի իշխանութիւնը լռեցնում է ընդդիմութեանն ու լրագրողներին:

«Երկրում վախի մթնոլորտ է, եւ Եւրոպան պարտաւոր է իր խօսքն ասել»,- յայտարարել է աշխարհահռչակ գրողը:

Փամուկը, նշում է Անսալդոն, երբեք չի թաքնուել հարմարւողական բանաձեւերի ետեւում, ազգայնամոլները նրան բազմիցս սպառնացել են հաշուեյարդարով հայերի ցեղասպանութեան եւ քրդերի զանգուածային սպանութիւնների մասին հրապարակային յայտարարութիւնների համար:

Հարցազրոյցում Փամուկն ասել է, որ Եւրոպան կուրանայ իր իդեալները, եթէ փորձի պատնէշներով պաշտպանուել միգրանտներից:

Թուրք գրողը նշել է, որ նախագահ Ռեջեփ Էրդողանը մտաւորականներին մեղադրում է իրեն իբրեւ թէ վիրաւորելու համար: Նախօրէին Ստամբուլի դատարանում քննել են Փամուկի ընկերոջ՝ Մուրատ Բելգէի գործը:

«Ես շատ լաւ եմ ճանաչում Բելգէին, նա մեր երկրի ամենանշանաւոր գիտնականներից մէկն է, նա իմ ընկերն է, ես նրա յօդուածները 50 տարի է կարդում եմ, ես նրանից շատ բան եմ սովորել»,- ասել է գրողը եւ աւելացրել. - «Ոչ ոք նախագահին չի վիրաւորում, խօսքը քաղաքական ընդդիմութեանը լռեցնելու, մտքի ազատութեանը հարուած հասցնելու, կառավարութեան քննադատութեան հնարաւորութիւնն խափանելու, ժողովրդին ահաբեկելու, երկիրն ահաբեկելու նախագահի գործելակերպի մասին է»:

Լրագրող Անսալդոն շեշտում է՝ Օրհան Փամուկը վախենում է ոչ թէ սեփական անձի, այլ երկրի, ընկերների, եւրոպամէտ հայեացքներով կիրթ, աշխարհիկ թուրքերի համար: Նրան շատ է մտահոգում մամուլի ազատութեան հարցը:

Իշխանութեանը քննադատող լրագրողներին ահաբեկում են, աշխատանքից են հեռացնում, թերթերը փակւում են, վերջին ժամանակաշրջանում խալամամէտ կառավարութիւնը կորցնում է ազատականի իր դէմքը, պետութիւնը հետզհետէ դառնում է աւելի աւտորիտար եւ հալածող:

«Նոյնիսկ չեմ ուզում խօսել ապագայի մասին, ներկան է չափից շատ տխուր»,- ասել է Փամուկը:

Նա ողջունում է մուտքի արտօնագրերի հարցով Եւրամիութեան եւ Թուրքիայի համաձայնութիւնը, բայց ասում է, որ հնարաւոր են տարաձայնութիւններ Եւրամիութեան եւ օրըստօրէ աւելի բռնապետական դարձող Թուրքիայի իշխանութեան միջեւ: Արդիւնքում կարող է այնպէս ստացուել, որ եւրոպացիները չցանկանան իրենց շուրջը տեսնել ոչ միայն սիրիացիներին, ասիացիներին, այլեւ քրդերին ու թուրքերին, իսկ դա, ըստ Փամուկի, ոչ ամենահաճելի զգացումը կլինի:

«Եւրոպան պարտաւոր է աւելի կոշտ դիրքորոշում որդեգրել Թուրքիայի նկատմամբ հենց մարդու իրաւունքների հարցում, յոյսով եմ՝ երբ եւրոպացի լիդերները սեղմում են թուրք գործընկերների ձեռքը, խօսքի ազատութեան մասին յիշեցնելու առիթը բաց չեն թողնում»,- յայտարարել է Օրհան Փամուկը:

## Հրապարակուել են «Պանամեան Փաստաթղթերում» Ընդգրկած Հայաստանցիների Նոր Անուններ

Գիտնականներ, իրաւաբաններ ու անգամ յանցագործ աշխարհի ներկայացուցիչների հետ կապ ունեցող հայեր կան, որոնց անուններով ընկերութիւններ են գրանցուել Բանամեան եւ Բրիտանական Վիրջինեան կղզիներում, Պանամայում կամ այլ օֆշորային գօտիներում:

Օֆշորում գրանցուած ընկերութիւններից մէկը «Նաիրի սոֆտ»-ն է: Ընկերութեան պաշտօնական կայքում որպէս գրանցման հասցէ նշուած է՝ Բրիտանական Վիրջինեան կղզիներ: Հայաստանում աւելի քան 10 տարի գործող, ծրագրաւորման ոլորտում յայտնի «Նաիրի Սոֆտ»-ը նշուած է որպէս Վիրջինեան կղզիներում գրանցուած նոյնանուն ընկերութեան հայաստանեան մասնաճիւղ: Սակայն մասնաճիւղի գործադիր տնօրէն Վարդան Քոչարեանը պնդեց, թէ դեռ 2000 թուականին իրեն ու ՏՏ ոլորտում հմտացած իր գործընկերներին Լոնդոնում գործող մի ընկերութիւն հրաւիրել է ընդամէնը համագործակցութեան - «Մինչեւ 2001 թուականը ես չգիտէի, թէ օֆշոր բառը ինչ է նշանակում: Այսինքն, մենք ինքնաբերաբար յայտնուել ենք դրա մէջ ու հիմա տհաճ իրավիճակի մէջ ենք գտնւում»:

Ըստ Քոչարեանի, իրենք որեւէ փաստաթուղթ չեն ստորագրել, պարզապէս անգլիացի գործընկերոջից յայտարարութիւն են լսել, որ հայ մասնագէտներն այդ կազմակերպութեան բաժնետէրեր են. - «Նոյն յայտարարութեան մէջ ասուել է, որ դուք ոչ մի պարտաւորութիւններ չէք ունենայ, այնպէս որ, դա պարգեւատրման նման ինչ-որ մի բան է, որը ցոյց է տալիս մեր կապը, թէ ինչքանով ենք մենք ձեզ վստահում... »:

«Նաիրի Սոֆտ»-ի հայաստանեան մասնաճիւղի խորհրդի նախագահ, ակադեմիկոս Յարութիւն Թերզեանը, ում անունը եւս կայ օֆշորային փաստաթղթերում, հերքեց իր առնչութիւնը այս պատմութիւններին: Բայց ասաց, որ դա, ամենայն հաւանականութեամբ, Լոնդոնում ապրող իր որդու՝ Արտաշէսի հետ է կապուած: Յետոյ կցկտուր բացատրեց, որ որդին Վիրջինեան կղզիներում գրանցուած ընկերութիւն ունի, բայց ինքը տեղեակ չէ, թէ ինչով է զբաղւում:

«Պանամեան փաստաթղթերում» «Հետք» էլեկտրոնային պարբերականը վերջերս բացայայտել էր Հայաստանի գլխաւոր հարկադիր կատարող Միհրան Պօղոսեանի անունը, ինչից յետոյ վերջինս հրաժարական տուեց:

«Հետք»-ի հարցմանն ի պատասխան, Հայաստանի Կենտրոնական բանկը տուեալներ էր տրամադրել, ըստ որոնց, Հայաստանից վերջին 5 տարուայ ընթացքում մօտ 2 միլիոն դոլար է փոխանցուել միայն դէպի Պանամա: 7 անգամ պակաս՝ մօտ 250 հազար դոլար փոխանցուել է հակառակ ուղղութեամբ՝ Պանամայից դէպի Հայաստան:

## Վոլինկին. «Ռուսաստանից Հայաստանը Ստանում Է Ամենաարդիական Սպառազինութիւն

Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ զէնքի մատակարարման մասին նոր պայմանագրերի իրականացումը որոշ ժամանակ է պահանջում: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասել է Հայաստանում ՌԴ դեսպան Իվան Վոլինկինը:

Անդրադառնալով հարցին, թէ ինչով է պայմանաւորուած ռուսական զէնքի մատակարարման ուշացումը, դեսպանն ասաց. «Գիտէք, դա ուշացում չէ, դա տեւական գործընթաց է: Դա չի նշանակում, որ Ռուսաստանը զէնք չի մատակարարել, Ռուսաստանը Հայաստանին զէնք մատակարարել է: Պարզապէս նոր պայմանագրերը ինչ-որ ժամանակ են պահանջում, առաջին հերթին Հայաստանին անհրաժեշտ սպառազինութիւնները ընտրելու համար: Երկրորդ հերթին՝ ժամանակ է պէտք անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ու համաձայնագրերը աւարտին հասցնելու համար: Այնպէս որ ես կարծում եմ, որ ամէն բան կը լինի ժամկէտներում եւ նորմալ»,- հաւելիել է դեսպանը:



Հայաստանի մօտ Ռուսաստանի դեսպան Իվան Վոլինկին

Դիտարկմանը, թէ քառօրեայ պատերազմի օրերին եւ դրանից յետոյ, Հայաստանում շատերի համոզմամբ, դաշնակից համարուող Ռուսաստանը չէզոքութիւն պահպանեց, Վոլինկինն արձագանգեց. - «Հայաստանն իրօք հանդիսանում է Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցը, այնպէս, ինչպէս Ռուսաստանն է Հայաստանի ռազմավարական դաշնակիցը, եւ մենք կանենք հնարաւոր ամէն ինչ, որպէսզի այս դաշնակցային յարաբերութիւնները պահպանուեն: Ինչ վերաբերում է սպառազինութեան մատակարարումներին, վստահ եմ, որ Հայաստանը ստանում է սպառազինութիւն, ամենաարդիական սպառազինութիւն՝ իր անկախութեան, ինքնիշխանութեան պաշտպանութեան համար: Գործելու ենք նոյն այս դաշնակցային յարաբերութիւնների շրջանակում»:

Հայաստանն ու Ռուսաստանը անցած տարի Յունիսին ստորագրեցին 200 միլիոն դոլար կազմող վարկային համաձայնագիր, որի շրջանակում Մոսկուան պէտք է սպառազինութիւն մատակարարի Հայաստանին: Շուտով կը լրանայ փաստաթղթի կնքման մէկ տարին, սակայն հայկական կողմը դեռ խօսում է սպառազինութիւնը ստանալու շուրջ տարուող աշխատանքների մասին:

## Գորիսն Աւելի Գրաւիչ Է Դարձել Զբօսաշրջիկների Համար



«Տաթեւի թեւեր» ճոպանուղին

Գորիս այցելած ռուս զբօսաշրջիկներն ասում են՝ այստեղ ամէն անգամ նոր բացայայտումներ են անում: «Անցեալ անգամ այստեղ տեսանք Նորվեգիան, լեռներում ինչ-որ մէկը Խորվաթիան է տեսել: Քանի որ այստեղ շատ ոտող բազմաթիւ խնդիրներ դեռ հիւրասէր մարդիկ են, իսկ նշուած երկրներում էլ գները բաւականին բարձր են, աւելի լաւ է գալ Հայաստան»,- պատկերաւոր համեմատութիւններ են անում ռուս զբօսաշրջիկները:

Թէեւ Գորիսը տարեցտարի աւելի գրաւիչ է դառնում օտարերկրացի զբօսաշրջիկների համար, այդուհանդերձ, տուրիզմի զարգացմանը խոչընդոտում են չլուծուած: «Միրհաւ» հիւրանոցի հիմնադիր տնօրէն Շահէն Զեյթունցեանն ասում է՝ եթէ նախկինում աւելի շատ հիւրեր էին ունենում եւրոպական երկրներից, ապա հիմա հիւրերի թւում գերակշռում են ռուսները, որոնք «քաղաքական խնդիրների պատճառով» Թուրքիա չեն գնում: Զբօսաշրջիկների թուի աճը Շահէն Զեյթունցեանը պայմանաւորում է նաեւ «Տաթեւի թեւեր» ճոպանուղու գործարկմամբ: «Ամէն տարի մենք նկատում ենք շօշափելի աճ թէ՛ տուրիստների քանակի, թէ՛ որակի մէջ: Եթէ այն ժամանակ գալիս էին քիչ քանակով եւ մէկ օրով, հիմա աւելի երկար են մնում»,- ասում է Զեյթունցեանը:

Զբօսաշրջութեան զարգացմանը խոչընդոտող խնդիրների շարքում նա առաջին հերթին մատնացոյց է անում քաղաքի աղբահանութեան վատ կազմակերպումը, անբարեկարգ մայթերն ու փողոցները: «Մայթերն անանցանելի են, դրա համար մարդիկ փողոցի մէջտեղով են քայլում, եւ դա շատ վտանգաւոր է, քանի որ եւրոպացիները սովոր չեն ճանապարհի մէջտեղով քայլել, չգիտեն ինչպէս վարուել, եթէ դիմացից մեքենայ է գալիս»:

Զբօսաշրջիկները դժգոհում են ոչ միայն ներհամայնքային, այլեւ միջպետական ճանապարհներից: Զեյթունցեանը շեշտում է՝ միայն հիւրանոցով տուրիզմ չեն զարգացնում: «Այս ճանապարհներով տուրիզմ չի զարգանայ: Եթէ մեր կառավարութիւնն է, իշխանութիւնն է, յայտարարում է՝ ես տուրիզմը զարգացնում եմ, պէտք է նստի մտածի՝ որտեղ է սկսում, որտեղ է վերջանում տուրիզմը: Հօթելով տուրիզմ չեն զարգացնում: Հօթելում մարդը քնում է, արթնանում, տեսնում է փողոցը կեղտոտ է, զզւում է: Ճանապարհին ուզում է զուգարանից օգտուել, չկայ, եւ այլն, եւ այլն: Դա արդէն տուրիզմի համար տհաճ երեւոյթ է»,- շարունակում է Զեյթունցեանը:

Հայաստանի կառավարութիւնը, նկատի առնելով հանգամանքը, որ Գորիսն իր իւրօրինակ աշխարհագրական դիրքով, բնական հանգստի գօտիներով, պատմամշակութային եւ ազգագրական առանձնայատկութիւններով, ունի զբօսաշրջային կենտրոն դառնալու լաւագոյն հնարաւորութիւններ, Ջերմուկից յետոյ որոշել էր զբօսաշրջութիւնը զարգացնել նաեւ Գորիսում: Էկոնոմիկայի նախարարութիւնը մշակել եւ կառավարութեան հաստատմանն էր ներկայացրել «Գորիսի զբօսաշրջութեան զարգացման ծրագիրը»: Այն ենթադրում էր 2014 -2016 թթ. ընթացքում քաղաքի պատմամշակութային միջավայրի վերականգնում, զբօսաշրջային ռեսուրսների տուեալների բազայի ստեղծում, զբօսաշրջային ենթակառուցուածքների բարելաւում եւ այլն:

Դրանով Գորիսը հաւակնում էր վերածուել տարածաշրջանային ամենամեայ աւանդական փառատօներ կազմակերպող միջազգային կենտրոնի: Արդէն 2016 թուականն է, սակայն ենթակառուցուածքների զարգացման, պատմամշակութային միջավայրի վերականգնման ուղղութեամբ տեսանելի ոչինչ չի արուել: Իսկ մինչ այդ՝ Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը ձեռքբերումների շարքում առանձնացնում է զբօսաշրջութեան տեղեկատուական կենտրոնի ստեղծումը:

«Կառավարութեան որոշման կէտերից մէկը Գորիսում զբօսաշրջութեան տեղեկատուական կենտրոնի ստեղծումն էր, եւ այդ կենտրոնը ստեղծուեց: Նշեմ «Սիսեաց աւանդոյթներ» փառատօնի մասին, որ իւրաքանչիւր տարի Գորիսում իրականացւում է թթի փառատօն»,- ասում է Ադունցն ու ընդգծում՝ քաղաքի լուսաւորման, բակերի բարեկարգման, ասֆալտապատման ուղղութեամբ եւս աշխատանքներ տարուել են: 2016-2021 թուականների կտրուածքով Համաշխարհային բանկի աջակցութեամբ իրականացուող ծրագիրն էլ ենթակառուցուածքային խնդիրներ կլուծի: Վաչագան Ադունցը վստահեցնում է, որ նախաձեռնութիւնը թղթի վրայ չի մնայ:

## Հայաստանի Եւ Արցախի Մէջ Նշուեցան Մայիս 9-ի Տօները

Շարունակուած էջ 1-էն

նէ անհրաժեշտ քայլերը: Անոր համաձայն, կրակմարի պայմանաւորուածութեան խախտումները ստացած են արժանի պատասխան:

Իսկ Արցախի Հանրապետութեան նախկին նախագահ Արկադի Ղուկասեան յայտարարեց, որ ստեղծուած վիճակին մէջ զիջումներու մասին խօսիլը պարզապէս անհեթեթութիւն է: «Ոչ մէկ զիջում կրնայ ըլլալ միակողմանի: Մեր զիջումները կախեալ են Ատրպէյճանի վարքագիծէն եւ զիջումներէն», հաստատեց նախկին նախագահը:

Արցախեան հանդիսութիւններուն իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեանը: Ան հաստատեց, որ հայկական կողմը հակառակորդին պիտի պարտադրէ հաշուի նստիլ հայ ժողովուրդին հետ: «Հակառակորդի սանձազերծած քառօրեայ պատերազմը մեզի աւելի համախմբուած ու միասնական դարձուց, որուն իբր արդիւնք մենք ապահովեցինք մեր յաղթանակը:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան յայտարարեց, որ Շուշիի ազատագրութիւնը անկիւնադարձային էր Արցախի դէմ Ատրպէյճանի սանձազերծած պատերազմին մէջ: Անոր համաձայն, Արցախի յաղթանակած բանակը այսօր սահմաններուն վրայ կը պայքարի ֆաշիզմի նորագոյն դրսեւորումին դէմ: Նալպանտեան հաստատեց, որ այս փուլին կրնան ըլլալ տեսակցութիւններ եւ քննարկումներ, որոնք կը վերաբերին սահմանային բախումները կանխարգիլելու քայլերուն: Անոր համաձայն, տեսակցութիւններուն ընթացքին նաեւ կարելի է քննարկել բանակցային հոլովոյթին վերդառ նալու հաւանականութիւնը: Խօսելով Երեւանի կողմէ Արցախի անկախութեան ճանաչման առաջարկներուն մասին Նալպանտեան նշեց, որ ճանաչումէն խուսափիլը վախի հարց չէ, այլ քաղաքական նկատառումներու:

## Պատմական Օրեր Լաս Վեկասի Մէջ

Շարունակուած էջ 1-էն

նի պատուոյ հիւպատոս Անտի Արմէնեան, Ազգային Թեմական Խորհուրդի պատասխանատուներ եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներ ու հոծ բազմութիւն մը: Այս առթիւ Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Յովնան Արք. իր ելոյթին մէջ ըսաւ «Սուրբ Կիրակոս Եկեղեցին իր համալիրով, փոքրիկ Հայաստան մըն է օտարութեան մէջ»: Այնուհետեւ խօսք առին նաեւ եկեղեցւոյ բարեար իրաւաբարն Մարք Կիրակոս եւ ուրիշներ: Երեկոն անցաւ ջերմ ու խանդավառ մթնոլորտի մէջ, մասնակցութեամբ երգիչ Արտուշ Ասատրեանի եւ իր նուագախումբին:

Շաբաթ Մայիսի 7ին տեղի ունեցաւ Ս. Կիրակոս եկեղեցւոյ մշակութային համալիրի մաս կազմող շաբաթօրեայ վարժարանի պաշտօնական բացումը, նախագահութեամբ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի: Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ գեղարուեստական յայտագիր, մասնակցութեամբ շաբաթօրեայի սանսանուհիներուն: «Մայրերու Օր»ուան առթիւ եւ Յովնան սրբազանի փափաքով այնուհետեւ ան պիտի կոչուի «Սեդա Թաճիրեան Շաբաթօրեայ Վարժարան»:

Կիրակի Մայիս 8ին նորաօծ Ս. Կիրակոս եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ անդրանիկ պատարագ: Պատարագիչն էր Արեւմտեան Թեմի Հայաստանեայց եկեղեցւոյ առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան: Ս. սեղանին կը սպասարկէին Փուեբլոյի հոգեւոր հովիւ Տ. Տաթեւ Աւ. Քհնյ. Յարութիւնեան եւ Ֆրեզնոյի հոգեւոր հովիւ Տ. Եսայի Քհնյ. Պետրոս: Իսկ երգեցողութիւնը ներդաշնակ կերպով կատարեց Ս. Կիրակոս եւ Վէն Նայսի Ս. Պետրոս եկեղեցիներու միացեալ երգչախումբը, ղեկավարութեամբ Տ. Նարեկ Աւ. Քհնյ. Մատարեանի: Այս առթիւ տեղի ունեցաւ նաեւ մկրտութեան աւազանի օծումն ու օրհնութիւնը:

## ՄԻԱՑԵԱԼ ԿՈՉ

Շարունակուած էջ 1-էն

Մայիս 2016ին: Թելեթոնը նուիրուած է պատերազմական դրութեան մէջ գտնուող Արցախի անմիջական կարիքները հոգալու:

Հայրենիքի անվտանգութեան նպաստելը իւրաքանչիւր հայու պարտականութիւնն է:

9 Մայիս 2016
Լոս Անճելըս, Քալիֆորնիա, ԱՄՆ

-Առաջնորդարան Հայց. Առաքելական Եկեղեցւոյ
Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի, Պըրպէնք
-Առաջնորդարան Հայց. Առաքելական Եկեղեցւոյ
Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի, Լա Քրեսենթա
-Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական
Եկեղեցիներու Միութիւն
-Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ
Միացեալ Նահանգներու եւ Քանատայի Թեմ
-Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի Շրջան
-Ռամկավար Ազատական Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի Շրջան
-Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէ
-Հ.Ը.Բ.Մ. Արեւմտեան Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողով
-Հայ Օգնութեան Միութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջան
-Ամերիկայի Հայկական Համագումարի
Հարաւային Քալիֆորնիոյ Շրջան:

# ՄԻ՞ԹԷ ԱՐՑԱԽԸ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է, ՄԻ՞ԹԷ ՀԱՅԵՐԸ ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆ ԵՆ. ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԲՆԻԿ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

Արցախի դէմ Պաքուի սանձազերծած քառօրեայ պատերազմը, իսկ այժմ էլ հայ-ատրպէյճանական շփման գծում պահպանուող լարուածութիւնը ներկայիս Ատրպէյճանի տարածքի բնիկ ժողովուրդների մօտ ազգային ինքնագիտակցութեան որոշակի զարթօնք են առաջացրել: Այն բանից յետոյ, երբ Թալիշական կազմակերպութիւններն ու մտաւորականները օրերս Ատրպէյճաանում բնակուող իրենց հայրենակիցներին կոչ էին արել չծառայել Արցախի հետ շփման գծում, նրանց օրինակին հետեւում են բնիկ այլ ժողովուրդների՝ լեզգիների, աւարների, ուտիների կազմակերպութիւններն ու երեւելի գործիչները: Աւարական Ջամաաթների միութիւնը, Լեզգիական ժողովրդի համաշխարհային կոնգրեսը, Լեզգի սպաների համառուսաստանեան միութիւնը, Լեզգիական երիտասարդութեան համառուսաստանեան միութիւնը, ռուլթուլ գրող-հրապարակախօս Ֆազիլ Դաշլայը եւ մի շարք այլ գործիչներ տարածել են համատեղ յայտարարութիւն, որով ներկայիս Ատրպէյճանի բնիկ ժողովուրդների ներկայացուցիչներին կոչ են արել չծառայել Արցախի ՀՀետ սահմանին: Յայտարարութեանը կից ներկայացուած են քառօրեայ պատերազմում զոհուած լեզգի, աւար եւ միւս ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչ հանդիսացող զինծառայողների լուսանկարները:

«Մեր թանկագին եղբայրներ ու որդիներ, արդէն 20 տարուց աւելի է Ատրպէյճանի ղեկավարութիւնը մեր ժողովուրդներին ստիպում է կռուել Արցախ-Ղարաբաղի հայերի դէմ: Դա ամենամեծ անարդարութիւնն է, որին Ատրպէյճանի բնիկ ժողովուրդները իրենց կամքից անկախ մասնակցում են: Արդէն 20 տարուց աւելի է, մեր երիտասարդները սպառնալիքի տակ են դնում իրենց կեանքերը յանուն ատրպէյճանական շահերի: Բաւական չէ իրենք մեռնում են, նաեւ սպանում են մեր դարաւոր հարեւաններին՝ հայերին: Եւ այդ ամէնը արւում է միայն այն բանի համար, որ ամրապնդուի Պաքուի իշխանութիւնը մեր հայրենիքում: Ոչ ոք չի կարող մեզ բացատրել, թէ ինչու լեզգիները, թալիշները, աւարները, ուդիները, ռուլթուլները, ցախուրները պէտք է կռուեն հայկական լեռներում: Պաքուն ասում է, թէ մենք պէտք է պաշտպանենք հայրենիքը թշնամուց: Բայց միթէ Ղարաբաղը մեր հայրենիքն է: Եւ միթէ հայերը մեր թշնամիներն են»,-նշւում է յայտարարութեան մէջ:

Այնուհետեւ նշւում է, որ բնիկ ժողովուրդների պատմական տարածքներն այսօր վերաբնակեցւում են Լեռնային Ղարաբաղից, Նախիջեւանից ու Վրաստանից եկած ատրպէյճանցիներով: «Որքան էլ ցաւալի լինի ընդունելը, պէտք է ընդունենք, որ դրանում կայ նաեւ մեր մեղքը,-արձանագրել են կոչի հեղինակները, ապա շարունակել,- «Մենք իրաւունք չունենք սովորել եւ խօսել մեր մայրենի լեզուով, իրաւունք չունենք երգել մեր երգերը, գովաբանել մեզ ազգային հերոսներին: Մեզանից խլում են մեր պատմութիւնը, Մեզանից խլում են մեր լեզուն, մեր մշակոյթը, մեզանից խլում են մեր Հայրենքիը: Եւ դրանում մեր լռութեամբ ու անգործութեամբ մենք օգնում ենք մեր թշնամուն: Միայն թշնամին կարող է մեզ վտարել մեր տներից ու մեր տարածքները վերաբնակեցնել եկուող ատրպէյճանցիներով:

Այնուհետեւ յայտարարութեան հեղինակները տալիս են իրենց կողմից վերը ներկայացուած հարցադրման պատասխանը. «Թանկագին հայրենակիցներ, մենք ամենայն պատասխանատուութեամբ յայտարարում ենք, որ հայ ժողովրդի թշնամիները չենք: Մենք նաեւ ամենայն պատասխանատուութեամբ յայտարարում ենք, որ հայ ժողովրդին թշնամի չենք համարում: Հայերի ու մեր նախնիների պատմութիւնը հիւսուել է մեր սրբազան հողում: Մենք մեր թշնամիներին չպէտք է թոյլ տանք թշնամութիւն ու ատելութիւն սերմանել մեր ու հայերի միջեւ: Մենք վճռականօրէն ձեզ կոչ ենք անում հրաժարուել Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հետ սահմանին ծառայելուց: Մենք դէմ չենք ծառայելուն, բայց կտրականապէս դէմ ենք, որ նրանք կրակեն հայերի ուղղութեամբ: Մեր երիտասարդները պէտք է ծառայեն իրենց պատմական հայրենիքի տարածքում. Լեզգիները՝ Լեզգիստանում, Թալիշները՝ Թալիշստանում, աւարներն ու ցախուրները՝ Ջարում: Մենք պատրաստ ենք պաշտպանել մեր հայրենիքը ցանկացած թշնամուց, սակայն չենք ցանկանում զաւթել Ղարաբաղը նրանց համար, ովքեր ոչնչացնում են մեր պատմական ժառանգութիւնն ու անցեալը: Դա մեր պատերազմը չէ, եւ մեր երեխաները՝ մեր ապագան չպէտք է տուժեն այդ պատերազմում: Եթէ Ատրպէյճանին յաջողուի յաղթել Լեռնային ղարաբաղի հայերին, յաջորդ թիրախը լինելու ենք մենք՝ թալիշներս, աւարներս, ուդիներս, ցախուրներս... Ատրպէյճանը անպայման կ'օգտուի հայերի հետ պատերազմի փորձից, որպէսզի մեր իսկ ձեռքով ճնշի մեր ժողովուրդների ազատութեան հասնելու ձգտումը: Այդժամ մենք կը զրկուենք մեր պատմական Հայրենիքում ինքնիշխանութիւն ունենալու հեռանկարից: Եթէ մեր երիտասարդների կէսը կամ գոնէ 1/3-ը նմանորոշւում կայացնեն, Պաքուն անզօր կը լինի նրանց դէմ: Պաքուին քաջ յայտնի է, որ բնիկ ժողովուրդները թւով աւելի շատ են, քան ատրպէյճանցիները: Նման ուժի հետ ոչինչ անել հնարաւոր չէ: Քոյրեր եւ եղբայրներ, ձեր որդիներին մի ուղարկէք ԼՂՀ հետ սահմանին ծառայելու: Փրկենք մեր որդիների կեանքերը»:

Ի պատասխան նման կոչերի՝ ատրպէյճանական քարոզչամեքենան վերջին օրերին տարածում է լեզգիների եւ ազգային փոքրամասնութիւններին ներկայացնող այլ կազմակերպութիւնների ու գործիչների յայտարարութիւններ: Պատուիրուած այդ յայտարարութիւններում նրանք պատրաստակամութիւն են յայտնում մինչեւ վերջ կռուել իբր ընդհանուր հայրենիքի՝ Ատրպէյճանի համար, իսկ Արցախի դէմ չկռուելու կոչ անողներին անուանում դաւաճաններ: Սակայն, իրականութիւնն այն է, որ քառօրեայ պատերազմից յետոյ բնիկ ժողովուրդների շրջանում լուրջ զայրոյթ է առաջ բերել այն փաստը, որ զոհուածների թւում յարաբերականօրէն մեծ թիւ են կազմում ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչները: Վերջիններս գիտակցում են, որ դրա հետեւում դիտաւորութիւն կայ:

Ararat Foundation
Established 2005
ՈՒՀՄ
1956
Armenian Society of Los Angeles

"Արցախեան Քառօրեայ Պատերազմը Քաղաքական Զարգացումների Լոյսի Տակ"
"The Four Day War In Artsakh and Its Political Ramifications"
Կազմակերպութեամբ
"Արարատ Հիմնադրամի" եւ Լոս Անջելէսի Իրանահայ Միութեան
Organized by "Ararat Foundation"
and Armenian Society of Los Angeles



Դասախօսութիւն - Lecture
Դասախօս՝ - Lecturer
Պատմաբան եւ Քաղաքագէտ
Դոկտ. Կարապետ Մոմճեան
Historian and Political Scientist
Dr. Garabet Moumdjian

Տեղի կունենայ
Ուրբաթ, Մայիսի 20, 2016, կ.ե. ժամը 7-ին
Friday, May 20th, 2016 at 7:00p.m.
L.Ա. Իրանահայ Միութեան Կենտրոնում
Armenian Society of Los Angeles
117 South Louise Street, Glendale, CA 91205
Գեղարուեստական Յայտագիր-Հիւրասիրութիւն
Cultural Program-Reception
Մուտքը ազատ-Free Admission
For info: 800-435-0097

# ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՎ ՈԳԵՒՈՐՈՒԱԾ ԿՌԵՆՔ ՆՈՐԵՐԸ

## (Շուշիի ազատագրութեան 24րդ տարեդարձին առթիւ)




**Ռ. ԿՈՐԻՒՆ**

Յաղթութիւնը յաղթութիւն է բերում, վայ թէ պարտութիւն եղաւ, դա եւս պատճառ կը դառնայ պարտութիւնների, ուրեմն՝ անհրաժեշտ է շարունակ կազմակերպուել եւ պատրաստ լինել տարբեր ընագաւառներում նոր յաղթութիւնների, այս հոգեբանութիւնը պիտի դրոշմուի եւ խարսխուի իւրաքանչիւր հայի սրտում, հոգում եւ ուղեղում, սա պարտադիր առաքելութիւն է իւրաքանչիւրիս համար, քանի որ ապրում ենք այնպիսի մի տարածաշրջանում, ուր բարոյական արժէքները եւ արդարութիւնը ղրուշ իսկ հաշուի չեն առնւում, սուտն ու խաբկանքը, կեղծիքն ու շողոքորթութիւնը, ագամոլութիւնն ու մարդատեացութիւնը Թուրքերի մօտ դարձել է արեան գոյն, արեան բջիջ, իսկ եւրոպացու ու արեւմուտքի մօտ ժողովուրդների մէջ պառակտում եւ կռիւ առաջացնել իրենց շքեղ ապրելու գոյութեան հիմքերը պաշտպանելու համար: Ահա այսպիսի տարածաշրջանում եւ աշխարհում ապրելու համար մեր իշխանաւորներն նոյնպէս մեծ առաքելութիւն ունեն երկիրն ու ժողովուրդը պաշտպանելու եւ շարունակ մտածելու յաղթութեանց միջոցներ փնտռելու եւ ծրագրեր մշակելու մասին:

Անցեալներում շատ բաներ ենք կորցրել՝ հայրենի անսահման տարածքներ, ժողովուրդ, ազատութիւն, մեր պապերի արիւնով եւ քրտինքով կառուցուած կոթողներ, հարստութիւն, թանկագին մատենագրութիւն, արհեստի եւ արուեստի հրաշալի գործեր, ազգային հպարտութիւն, ինչո՞ւ այս բոլորը դարերի ընթացքում, Բագրատունեաց եւ Կիլիկեան թագաւորութեան անկումից յետոյ, քանի որ ապրել ենք ուրիշներին հաւատալով որպէս մեր փրկութեան լաստանաւը առաջնորդեն դէպի խաղաղ ափունք, սակայն նրանք թողել են մեզ ալեկոծ վիճակում հալածանքի մէջ: Նաեւ ապրել ենք ստրահոգեբանութեամբ, ապրել ենք այլոց միջոցով պառակտումի անմիաբանութեամբ, ապրել ենք օտարների համար շահի խաղաքարտ դառնալով, ապրել ենք մեր ձիրքերն ու ստեղծագործութիւնները տրամադրել օտարների փառքի ու հզօրացման համար, ապրել ենք օտարամոլութեամբ վանել մեր արժէքները եւ ուրիշների արժէքներով տարուել, ուրախանալ ու տարածել: Այս մտածումներով չի նշանակում մենք դէմ ենք երկրների միջեւ հաղորդակցութիւններ եւ յարաբերութիւններ եւ կապեր ունենալ, այլ՝ ընդհակառակը մեր նպատակը այն է, որ առողջ ու սերտ կապեր ունենանք իրատես եւ արդարացի քաղաքականութեան վրայ հիմնուած, ոչ թէ Արցախի հարցում Ռուսաստան եւ Արեւմուտք իրենց շահերից ելնելով պաշտպանում են ցեղասպան, մարդասպան եւ կողոպտիչ երկրին, որն ապրում է կրօնամոլութեան, ցեղապաշտական ատելամոլութեամբ սեւ քօղի տակ, ահաւասիկ անարդար պաշտպանութիւն առանց նկատի առնելու իրականութիւնը եւ հայ ժողովրդի դարերից ի վեր այդ տարածքի վրայ ապրած Արցախցու իրաւունքը: Ստալինի յանձնած Արցախն ու Նախիջեւանը, 1991-ի եւ մեր օրերի ռուսաստանի իշխանաւորները եթէ մէկ բերան ասէին դրանք հայերին են պատկանում էլ ոչ մի շուն չէր կարող հակառակել, որովհետեւ Ռուսաստանի եւ այլոց օգտին է Արցախը մնայ կռուախնձոր: Ուրեմն հայ իշխանաւորնե՛ր տեսնո՞ւմ էք մեր դաշնակցին վարահած քաղաքականութիւնը: Ռուսները սխալ քաղաքականութիւն են վարում, ինչ որ բիւզանդացիները ժամանակին արեցին մեր նկատմամբ, որը պատճառ դարձաւ ահաւոր արիւնահեղութեան՝ կոտորելով յոյներին, որով կորցրեցին իրենց երկրի կարեւոր մասը գերի դառնալով վայրենի օսմանցուն: Աստուած մի արասցէ ռուսների գլխին էլ նապիսի մի բան կատարուի: Ռուսները եւ միւս երկրները լաւ իմանան, որ ատրպէյճանի ղեկավարները քաղցկեղի ուռուցքներ են վտանգաւոր շրջանի երկրների խաղաղ համակեցութեան կեանքին:

Ասում են՝ Մայիս ամիսը գեղածիծաղ է իր յաղթութիւններով, որին եւս մեծ ուրախութեամբ եկաւ միացաւ Ապրիլ ամիսը իր քառօրեայ մեր հերոս զինւորների հերոսական յաղթանակով վայրագ թշնամուն յետ մղելով, որը եկել էր դարձեալ ցեղասպանութիւն գործելու, այս անգամ էլ ռուսը հասաւ ազերու օգնութեան կանգ տալով հայի յառաջխաղաղացումը:

Շուշիի ազատագրման 24-րդ տարին ենք թեւակոխում հայնացքներս յառած դէպի լուսապայծառ ապագային եւ յուսավառ սպասում ենք Արցախի ճանաչումը իր պապենական տարածքների վրայ: Ինչ փոյթ, կ'ուզեն ճանաչեն, կ'ուզեն չճանաչեն, ամէն ինչ վերջացած հարց է, Արցախցին քաջահամբաւ ապրում է իր պապենական հողերի վրայ եւ որեւէ մի ձեւով մի թիզն իսկ չի զիջելու, եւ ինչու պիտի զիջի, էլի իրեն գցի անիմանալի վտանգի մէջ: Թող լաւ իմանան որ բազում նահատակների արիւն է թափուել դարերի եւ մեր նորագոյն տարիների հոլովոյթում Արցախը պահելու եւ բռնագրաւուած հողերը ազատագրելու համար, դեռ ազերին Արցախի պետութեան տուգանք պիտի վճարի այդքան տարիներ հողերը բռնագրաւած շահագործելով:

Ասում են ՝ պատմութիւնը կրկնւում է, շիտակ է, սա հետեւութիւն է պատմութիւնից, քանի որ անցեալի մեր սխրագործ պապերի ապրած կեանքի դրուագներն են խթան ու մղիչ ուժ հանդիսանում մեր ներկայ սերնդի զաւակներին, որ խորապէս համոզուած արտայայտում են ներկայ ժամանակների պահանջը, որն է՝ միայն զէնքով կայ հայոց փրկութիւն, անշուշտ անցեալում ուժն է եղել, հիմա էլ ուժն է, ապագայում էլ նոյնն է լինելու, հետեւաբար՝ հայրենի իշխանութիւնները հայոց պետականութիւնը պիտի որ ամրապնդեն զօրութեան եւ հզօրութեան վրայ, ուրեմն՝ անկախ, խաղաղ, անփորձանք, բարեկեցիկ եւ ուժեղ ապրելու համար հերոսներն ու նուիրեալներն են կերտում այդ կեանքը:

Փրկուեց Շուշին 1992 թուի Մայիս 9-ին, լոյս ծագեց հինաւուրց հայոց քաղաքին: Ընկան հերոսներից մի քանիսը, այսպէս է եղել, միշտ մեծ գործերը զոհի արիւնով է արգասաւորւում, ինչպէս ցորենի հատիկը մեռնելով հողի մէջ, նոր հատիկներ են ընձիւղւում, նոյնը աւընչւում է նահատակ զինւորի արեան, որից ծնւում են նոր հերոսածին մարտնչողներ, երբ վտանգւում է հայրենին: Հայրենիքի պաշտպանութեան կռիւներում զոհեր լինում են, բայց ոչ թէ կռուի գնալ զոհուելու նպատակով, այլ՝ թշնամուն յաղթելու եւ փառքով հերոսի սխրագործութեան անուն վաստակելու համար:

Ահաւասիկ քսան չորս տարի է, որ Շուշին ազատագրուած է, ամէն տարի պարծանքի ուրախ միջոցառումներով տօնւում է նրա ազատագրման տարեդարձը: Այս հայոց քաղաքը այլազան վէրքեր է տեսել իր վրայ, նա դարձել էր Փանա խանի եւ նրա յաջորդների որջը, որտեղից դաւեր էր նիւթւում Արցախի բնակչութեան վերջ տալու համար: Գեղեցիկ Շուշին կորցրել էր իր հայկական փայլն ու պճնանքը, բռնի պարպուել էր եւ սրի էր քաշուել ազգաբնակչութիւնը եւ վերածուել մահ ու սարսուռ տարածող կենտրոնի: Այժմ նա հարազատ ծնողի գրկումն է, որ պիտի ծաղկի նոր կեանքով՝ սրտցաւ խնամքի ներքոյ: Բիւր յարգանք Շուշիի ազատագրման ճամբին ապրող հերոսներին եւ նահատակի փառքով ընկածների անթառամ յիշատակին, խունկ ու աղօթք նրանց լուսոյ խորանին, որ իրենց արեամբ ցուցաբերեցին հայրենասիրութեան եւ ազգասիրութեան մեծ սխրանք եւ օրինակելի կեանք:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած

եւ յարմար վարձքերով

հեռաձայնել՝ (626) 398-0506



# «ՀԱՅՐԻԿ, ՀԱՅՐԻԿ» (ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՐԱ ԱԿԻՆԵԱՆ)

**ԱԻԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ**




Մկրտիչ Խրիմեան Հայրիկ իր յախուռն նկարագիրով եւ կեանքի բուռն վերիվայրումներով հետաքրքրած է շատերը: Իր ժամանակակիցներուն համար առասպելական տիպար մըն էր, որուն համար ալ հայ կեանքին առնչակից աչքառու գրեթէ բոլոր դէմքերը տեսակցած են հետը կամ գրած իր մասին: Իր անմիջական յետնորդներուն համար եւս եղած է խորհրդանիշ եւ ուղեցոյց: Մինչեւ օրս խոր ակնածանքով կը դիմենք իր ուսանելի խորհուրդներուն եւ անժամանցելի պատգամներուն: Իսկապէս տիրական դէմք էր եւ այդպիսին ալ մնաց ան:

Կ. Պոլսոյ «Արաս» հրատարակչութիւնը ողջունելի նախաձեռնութեամբ մը 2012-ին համալրած է ցանկը Խրիմեան Հայրիկի նուիրուած հատորներուն՝ ընթերցողին յանձնելով Արա Ակինեանի «Հայրիկ, Հայրիկ» աշխատութիւնը: Սոյն գիրքը առաջին անգամ ըլլալով է որ հատորի վերածուած կը դառնայ մատչելի, որովհետեւ այդ թերթօնի ձեւով (121 թիւ) լոյս տեսած է Կ. Պոլսոյ «Ժամանակ» օրաթերթին մէջ 14 Դեկտ. 1964-22 Ապրիլ 1965 թուականներուն: Հեղինակը օգտագործած է Ա. Երակ ստորագրութիւնը: Հատորը հրատարա- կութեան պատրաստած է Արտաշէս Մարկոսեան: Լուսանկարներով ճոխացած 335 էջերէ բաղկացած հատորը գիտական ուսումնասիրութիւն մը չէ: Թէեւ ենթախորագրուած է՝ «Վէպ Եկեղեցապատմական Կեանքէ», սակայն գեղարուեստական գրականութեան ալ չի մօտենար. բայց՝ միջին ընթերցողին համար հանրամատչելի եւ ընկալելի գործ մըն է Խրիմեանը ճանչնալու եւ հասկնալու, իր ապրած ժամանակաշրջանին հարցերուն ծանօթանալու: Հեղինակին օգտագործած լեզուն, ենթագլուխներուն համառօտութիւնը, դէպքերուն կարճ եւ դիպուկ նկարագրականները բնականաբար հեզասահ կը դարձնեն անոր ընթերցումը:

Հատորը ունի երեք մասեր. - «Տաժանագին Վերելքը», «Եկեղեցիի Ծառայութեան Մէջ» եւ «Մկրտիչ Ա. Կաթողիկոս»:

Առաջինը (էջ 13-66) անոր կեանքին սկզբնական հանգրուանն է՝ մինչեւ հոգեւորականացում. ժողովուրդին տառապանքը մօտէն ճանչնալու եւ ապրելու հանգրուանը, անոր դաստիարակութեան նուիրուելու ջանքերը, թափառական կեանքը՝ Վանէն Պոլիս, Տրապիզոն ու Սիս: Պանդուխտներուն կողքին է ան եւ ականատեսը քրտական հարստահարութեանց. ապա ամուսնութիւն՝ կին ու դուստր, որոնք զոհ դարձան իր բացակայութեան Վանի մէջ: Բաժինը կ'աւարտի այսպէս.-

«Վերջապէս ունեցաւ կեանքին ամէնէն իմաստուն խորհուրդը: Որոշեց կրօնական ասպարէզ ընդգրկել եւ այդ ճամբով նուիրուիլ դաստիարակութեան դատին, որպէսզի կարենայ գէթ մասամբ կրօնաւորներու ըմդդիմութեան առաջքը առնել:

Եղբայրը շատ հակառակեցաւ, բայց Խրիմեան վճռած էր:

-Եղբայր իմ, կինս կորսնցուցի, զաւակս կորսնցուցի, Աստուած ալ կ'ըսէ որ կուսակրօն հոգեւորական ըլլամ: Հիմա կինս ալ, զաւակս ալ ազգիս կիները եւ զաւակներն են եւ անոնց լաւագոյնս ծառայելու ճամբան կրօնական ասպարէզն է»:

Երկրորդ մասը (էջ 69- 242) հասկնալիօրէն ամենաընդարձակն է: Հայրիկին բեղուն կեանքը՝ եկեղեցական, ազգային, կրթական եւ գրական ոլորտներուն մէջ կը պարզուի մեր առջեւ փուլ առ փուլ: Աղթամարի մէջ կուսակրօն քահանայ ձեռնադրուելէ ետք Պոլսոյ մէջ է որպէս քարոզիչ. 1856-ին կը սկսի հրատարակութիւնը «Արծուի Վասպուրական» ամսաթերթին: Բայց անոր ուշն ու ուրուշը Վան-Վասպուրականն է, գաւառի հայութեան լուսաւորութեան գործը: «Իր նպատակն է արեւելեան նահանգներու մէջ հաստատել նոր Վենետիկ մը: Աղթամար կղզիի մէջ կ'ուզէ հաստատել լուսոյ այս կեդրոնը»: Անոր պայքարը այս հանգրուանին թուրքէն ու քիւրտէն աւելի խաւարամիտ եւ յետադէմ հայ իշխանաւորներուն դէմ է՝ Պոլսոյ մէջ ամիրաաղայական խաւին, իսկ Վանի մէջ՝ հաստամիտ կղերականներուն ու միջնադարեան մտածողութեամբ տարրերուն: Ան կը հաստատուի նախ Աղթամար եւ ապա Վարագայ վանք՝ միշտ նորարարութեան եւ լուսաւորութեան հետամուտ: Կը հիմնէ տպարան, կը շարունակէ «Արծուի Վասպուրական»ին լոյս ընծայումը, կը հաւաքէ հաւատարիմ եւ ուսումնատենչ աշակերտներու հոյլ մը: Սակայն, ան թիրախն է հայ սարկամիտ հատուածին, որուն ներկայացուցիչներէն մին Պետրոս աղա Շաղոյեան կը ծրագրէ Խրիմեանի մահափորձը քիւրտի մը ձեռամբ: Ահա դրուագը.-

«Դժուար չէր սպաննել Խրիմեանը: Ան յաճախ Վարագէն առանձին կ'ելլէր եւ հետիոտն կ'երթար մօտակայ գիւղերը առանց զինուած ըլլալու: Այսպէս Մահմուտը վարձուելէ երկու օր վերջ Խրիմեան վանքէն ճամբայ ելաւ Վան երթալու: Առանձինն էր, անզէն էր, եւ քալելով կ'երթար: Ջոր մտած ատեն յանկարծ ծառերուն մէջէն դուրս ցատկեց Մահմուտը՝ հրացանը ձեռքը եւ կեցաւ վարդապետին դիմաց: Վասպուրականի արծիւը իր խորաթափանց հայեացքը գամեց քիւրտին աչքերուն մէջ: Քիւրտը յանկարծ շփոթեցաւ, դողաց եւ հրացանը ձեռքէն ինկաւ:

-Ինչո՞ւ շփոթեցար ու կը դողաս, հարցուց Խրիմեան մօտենալով քիւրտ ոճրագործին:

-Կ'ուզէի քեզ սպաննել, ըսաւ քիւրտը եւ գետին իյնալով գրկեց Խրիմեանի ոտքերը եւ սկսաւ համբուրել:

-Ինչո՞ւ չսպաննեցիր, հարցուց վարդապետը բարի ժպիտով:

-Կարծես Աստուած իմ ձեռքս բռնեց եւ սիրտս ըսաւ թէ պէտք չէ սուր բարձրացնել Աստուծոյ օրհնեալին դէմ:

-Ինչո՞ւ կ'ուզէիր ինձ սպաննել, հարցուց Խրիմեան:

-Թշնամիներդ հինգ ոսկի տուին որպէսզի քեզ սպաննեմ, բայց ես չկարողացայ:

-Օրհնեալ ըլլաս որդի, երթաս խաղաղութեամբ, բայց այս ինչ որ ըսիր ինծի, ուրիշներուն չըսես:

Քիւրտը զարմացած հարցուց.

-Դուն կը ներե՞ս քու թշնամիներդ:

-Աստուած այդպէս կը պատուիրէ, պատասխանեց վարդապետը:

Այսպէս խօսելով Խրիմեան ու Մահմուտը կը շարունակեն իրենց ճամբան եւ կը մտնեն քաղաք եւ կը բաժնուին սիրով»:

Ապա կ'ընտրուի Տարօնի առաջնորդ. կը հաստատուի Մշոյ Սուրբ Կարապետ վանքը: Կը սկսի հրատարակել «Արծուիկ Տարօնոյ» թերթը: Հոս եւս խաւարամոլներ կ'անհանգստանան եւ երկու անգամ մահափորձի կ'ենթարկեն զինք.

«Արդարեւ քանի մը օր վերջ Խրիմեան Սուրբ Կարապետէն իջաւ քաղաք (Մուշ) եւ գործերու պատճառով գիշերը առաջնորդարանը մնաց: Առաջնորդ ըլլալով հանդերձ ինք Սուրբ Կարապետ կը մնար եւ մերթ ընդ մերթ կ'իջնէր առաջնորդարան: Գիշերը կանուխ անկողին մտաւ: Դեռ աչքերը չփակած հրացանի ձայներ լսեց: Իր պառկած սենեակին ապակիները կը փշրուէին:

Շփոթած պառուհան վազեց եւ ձախ ձեռքին փամփուշտ մը եկաւ:

Ցետոյ փախան դաւադիրները: Խրիմեան ձեռքը կապել տուաւ ու կրկին անկողին մտաւ: Յաջորդ օր կառավարութեան մօտ գործերը հետապնդելու գնաց:

-Անցած ըլլայ վարդապետ, ըսաւ կառավարիչը, ի՞նչ եղաւ ձեռքդ:

-Բարեկամներ նշանառութեան փորձ ըրին, ըսաւ:

-Ջհասկցայ:

-Լաւ կ'ըլլայ որ չհասկնաք:

Նոյն օրը Սուրբ Կարապետ դարձաւ: Հոն ալ աճաբեկիչներ կային: Գիշերը երբ ճրագը առած պարտէզ ելաւ, քանի մը ձեռք կրակ ըրին վրան: Այս անգամ չվիրաւորուեցաւ: Աշակերտները զէնքի ձայներէն շփոթած դուրս վազեցին:

-Ի՞նչ եղաւ, Հայրիկ, պոռացին:

-Հը... թշուառականներ, ըսաւ հանդարտ շեշտով մը, կ'ուզեն ինձ գնդակով թռցնել: Բայց չեն գիտեր որ թնդանօթն իսկ քիչ կու գայ ինծի: Արծիւը անոնցմէ չի վախնար»:

1868 Հոկտեմբեր 18-ին Էջմիածնի մէջ կը ձեռնադրուի եպիսկոպոս «ի վերայ Տանն Տարօնոյ եւ Գլակայ վանուց»: 1869 Սեպտեմբեր 4-ին կ'ընտրուի Կ. Պոլսոյ պատրիարք: Ժողովրդա- յին լայն ընդունելութիւն կը գտնէ ան ամէնուր՝ «Կեցցէ Հայրիկը», «գիթօ Խրիմեան», «եաշասըն Բաթրիք էֆենտի»: Պատրիարքական շրջանը կ'ըլլայ բարդ: Կառավարական շրջանակները մէկ կողմէ, ազգային իշխանութիւնները միւս կողմէ, ինչպէս նաեւ գաւառի տառապակոծ հայութեան մռայլ վիճակը կը հարկադրեն զինք հրաժարելու պատրիարքական գահէն՝ 1873 Օգոստոս 3-ին: Կը մնայ Պոլիս՝ կէս մեկուսացեալ: Այնուհետեւ՝ դէպի Պերլինի (1878) վեհաժողով, ուրկէ վերադարձ յուսախաբ՝ «Երկաթէ Շերեփ»ի պատգամով: Շրջան մը նորէն Պոլիս եւ ապա կ'ընտրուի

Շար.ը էջ 19

Հայրենասիրական Երգերու Երեկոյ

կազմակերպութեամբ՝

ՍԴՀԿ Փարամազ մասնաճիւղի

եւ

Հ.Մ.Մ.-ի Տիկնաց Միութեան

Մասնակցութեամբ՝

Ազգային Երգերու Մեկնաբան ԱՌՆՕ-ի

Տեղի կ'ունենայ

Շաբաթ, 14 Մայիս-ի երեկոյան ժամը 8-էն սկսեալ

ՀԿԲՄ-ի »Կարօ Սողանալեան« սրահէն ներս

1060 North. Allen Ave .Pasadena Ca 91104

Ձեռնարկի Հասոյթը Ամբողջութեամբ Պիտի Յատկացուի Արցախի Հայոց Բանակին

Համադամ ճաշեր

Հեռաձայն 626 797-7680

Տոմսեգին 35 Տոլար

# Massis Weekly

Volume 36, No. 18 Saturday, May 14, 2016


## Victory Day, Shushi Liberation Celebrated in Stepanakert




STEPANAKERT (Armradio) — On 9 May within the framework of celebrations to mark the Victory Holiday, the Day of the Nagorno Karabakh Republic Defense Army and the Liberation of Shushi Artsakh Republic President Bako Sahakian together with Armenian Prime Minister Hovik Abrahamian and NKR second President Arkady Ghukasian attended the Stepanakert Memorial Complex, laid a wreath and flowers to the monuments commemorating martyrs perished in the Great Patriotic War and the Artsakh Liberation Struggle.

On the same day Bako Sahakian, Hovik Abrahamian and Arkady Ghukasian visited the town of Shushi and laid garlands and flowers to the pedestal of the tank-monument and the monument of Sparapet Vazgen Sargsian. They partook in the opening of "Karabakh's Revival" photo-exhibition of prominent photographer Martin Shahbazian and his "Artsakh-Revival" book presentation, as well as were present at the candle lighting held at the Ghazanchetsots Church of Christ the Savior.

Primate of the Artsakh Diocese of the Armenian Apostolic Church Archbishop Pargev Martirosian, NA chairman Ashot Ghoulian, prime-minister Arayik Haroutyunian, high-ranking officials from Artsakh and Armenia, guests from the Diaspora and abroad partook at the festive events.

**May 9 Two Victories Day**

May 9 has been of special importance for Armenians for 24 years: the victory in the Great Patriotic War in 1945 was later followed by a victory in the liberation of Shushi, a fortress in Nagorno-Karabakh (Artsakh), with subsequent formation of the Nagorno-Karabakh Defense Army, in 1992.

In 1941-1945, the Armenian people actively contributed to the victory. About 600,000 Armenians participated in the great patriotic war. Six Armenian divisions were formed, and 314,000 Armenians were killed or went missing.

The Armenian people is proud of four Marshals and one Admiral – Ivan

**Continued on page 4**

## Armenian Government Submits Bill Recognizing Independence of Nagorno-Karabak Republic

YEREVAN -- The Armenian government has approved a draft bill recognizing the independence of Nagorno-Karabakh Republic (NKR) and sent the bill to the country's parliament for approval.

The government made it clear that the National Assembly could approve the bill only if Azerbaijan unleashes a new aggression against Karabakh.

The cabinet passed judgment on the measure proposed by two opposition lawmakers Zaruhi Postanian and Hrant Bagratian. In a written recommendation to the parliament, it said that Yerevan should recognize the NKR only "as a result of negotiations between Armenia and Artsakh (Karabakh) that would take into account further developments, including external factors."

"Our position is clear: if Azerbaijan tries to wriggle out of the ceasefire regime and launches a new aggression, the [recognition] issue will definitely be on the agenda," Deputy Foreign Minister Shavarsh Kocharian told journalists after a weekly cabinet meeting in Yerevan.

President Serzh Sarkisian threatened to recognize Karabakh following the April 2 outbreak of heavy fighting along the Karabakh "line of contact" which left at least 170 soldiers from both sides dead. Azerbaijan's government warned Yerevan this week against taking such a "provocative" step.

A spokesman for Russian President Vladimir Putin expressed hope on Thursday that Yerevan will not press ahead with the recognition. "We are very closely monitoring decisions taken in this context," Dmitry Peskov told reporters in Moscow. "We certainly continue to expect the parties will avoid any steps that could undermine the shaky ceasefire and lead to an escalation of tensions in Nagorno-Karabakh."

Azerbaijan, meanwhile, has warned that if Armenia does pass the bill this time around, it will mean the end of the negotiating process within the framework of the OSCE Minsk Group calling it "another Armenian provocation".

**Karabakh Army Chief Sees No Further Escalation**

Heavy fighting in and around Nagorno-Karabakh is unlikely to resume soon, the commander of Karabakh's Armenian-backed army, Lieutenant-General Levon Mnatsakanian, said on Monday.

"No, tension will not rise [on the frontlines,]" Mnatsakanian told journalists in Stepanakert. "We have actually registered a decrease in it."

Mnatsakanian claimed that the Azerbaijani army has adopted a defensive posture after launching offensive operations on April 2 at several sections of "the line of contact" around Karabakh. "They are now organizing defense," he said. "There is an atmosphere of fear on their side."

"Our forces are now on high alert and will fight back if need be," added the Defense Army chief.

## April 24 Perpetually Designated as Armenian Genocide Remembrance Day for Orange County

COSTA MESA, CA -- Vice Chair Michelle Steel of the Orange County Board of Supervisors proposed a resolution that was unanimously supported by her fellow Board of Supervisors to officially designate each April 24 as Armenian Genocide Remembrance Day. The reoccurring event will be dedicated to commemorating those who perished during the Armenian Genocide from 1915 to 1923.

"Orange County needs to continue leading the way to ensure that this historic tragedy is never forgotten and the victims of genocide continue to be honored," said Vice Chair Steel.

This year will be the 101st anniversary of the Armenian Genocide that took the lives of one and a half million Armenians. Not only were Armenians massacred within their historic homeland, but their lands and property were seized.

"Over one hundred years have passed since the beginning of the Armenian Genocide, and there isn't anyone left to try or convict. But, there is still an opportunity to set the record straight. As a County, we denounce these horrendous crimes against humanity and commemorate the lives of the Armenian men, women, and children lost." Said Vice Chair Steel

This year will be the first year the County of Orange will officially recognize the Armenian Genocide. By virtue of the reoccurring resolutions that it was unanimously voted to, April 24th will be commemorated as the Armenian Genocide Day of Remembrance from this day forward.

## Turkey Warns Bundestag Against Armenian Genocide Recognition



ANKARA (Armradio) -- Turkey on Monday called on German lawmakers to "act reasonably" when considering a bill next month on recognizing the deaths of Armenians in 1915 as "genocide".

Tanju Bilgic, a Foreign Ministry spokesman, said Ankara had been following the preparation of the resolution and its "politicizing" of history, Anadolu Agency reports.

"It is possible that if the resolution is approved Turks living in Germany and Turkey will react seriously," he said at a weekly news conference in Ankara. "In this framework, we expect the German parliament to act in common sense and reasonably."

German lawmaker Albert Weiler announced in Armenia Friday the Bundestag would consider a resolution on recognizing the events of 1915 as "genocide" on June 2.

Last year, parliamentary parties approved the resolution in principle but sent it to committee for further work.

"These [politicians] are further complicating the issue," Bilgic said. "Genocide is not an issue that can be abused with political aims."

He reiterated Turkey's call to establish a joint commission to investigate the killings.

## 'Panama Papers' Include 37 Individuals and Entities Affiliated with Armenia




YEREVAN, (Arka) -- The updated 'Panama Papers' database, available at offshoreleaks.icij.org, include 37 individuals and entities affiliated with Armenia. The document includes 32 addresses, as well as three companies that mention the word "Armenia" - ARMENIA GROUP S.A., ARMENIA DEVELOPMENT LTD, GPM ARMENIA LTD, two of which are registered in the British Virgin Islands. The place of registration of the third is unknown. At the same time, these three companies are indirectly linked to Luxembourg, Panama and the United Kingdom.

According to economist Vardan Bostanjyan the inclusion of Armenias in the 'Panama Papers" is an indication of lack of control and appropriate levers, which are inherent in an effective government

"This means that these persons managed to take significant financial means out of the country", he said during a press conference, stressing that offshores has one goal - to hide the money.

"This means capital outflow from the country. This has a very negative effect on the economy,' he said.

The updated list includes also 6,285 persons from Russia, 127 from Azerbaijan, 82 from Georgia and 148 from Iran.

One of the Armenians in the list is now the former Chief Enforcement Officer Mihran Poghosian, who according to the Armenian Hetq.am investigative website is a shareholder in three companies registered in Panama - Sigtem Real Estates Incorporated, Hopkinten Trading Incorporated and BANGIO INVEST S.A.

A former environment minister and the current head of Armenia's Water Committee Aram Harutyunian are also mentioned in the list.

The "Panama Papers" database went live on Monday - the largest ever release of secret offshore companies and the people behind them. The data, collated by the International Consortium of Investigative Journalists (ICIJ), comes from the Panamanian law firm Mossack Fonseca and includes information about companies, trusts, foundations and funds incorporated in 21 tax havens, from Hong Kong to Nevada in the United States.

The names of thousands of offshore companies were published on Monday night as the Panama Papers were released in full. The ICIJ made information fully available on 200,000 companies, trusts and foundations set up in 21 jurisdictions

## Azerbaijan's Losses Exceed 800: OSTKRAFT

YEREVAN (Armradio) — The losses of the Azerbaijani side in the recent clashes along the Nagorno Karabakh line of contact are estimated to exceed 800, OSTKRAFT analytical center reports, quoting sources at the Azerbaijani General Staff.

According to the report, it was the great number of losses that made Azerbaijan stop the aggression and return to the negotiating table.

"Judging from this data, the words of Azerbaijani Ambassador to Russia about the readiness of his country to solve the Karabakh issue in a military way look deeply untenable, as Azerbaijan has neither power, not means for that," the analysis says.

According to the report, the only thing Azerbaijan provoked with its unreasonable actions is the possible recognition of Nagorno Karabakh by Armenia.

## "Congratulations on Slavery Festival!" Heydar Aliyev's Statue in Baku Desecrated




BAKU -- On May 10, late Azerbaijani dictator Heydar Aliyev's birthday, a graffiti reading "Congratulations on Slavery Festival!"(Qul bayraminiz mübar?k!) appeared on the pedestal of one of the numerous monuments to him in a park carrying his name located in front of the Central Bank of Azerbaijan in Baku.

According to the Azerbaijani opposition online Meydan TV website, an unknown author punned on the phrase "Congratulations on flower festival" by changing two letters in the first word and giving the word and the phrase a different meaning quite popular among the Azerbaijani dissidents and opposition.

The website notes that while the country lives in poverty, tens of millions of dollars are spent on flowers to celebrate the birthday of Heydar Aliyev, "the nationwide leader" and "the savior of the nation."This "feast in time of plague" -- observed every year in Baku -- has caused an ambiguous attitude in the Azerbaijani society for several years.

"For example, in 2014, more than 1 million flowers from 50 countries were brought for that festival on Heydar Aliyev's birthday. Their costwas not reported," the website writes noting that a special sort named "Heydar Aliyev" was among over thehalf million tulipsplanted on the occasion of "that joyful day."

The website notes that the festival -- lasting for several days -- starts on Heydar Aliyev's birthday, during which in the park named after Heydar Aliyev, in front of the Central Bank, compositions of rare flowers brought to the country are placed, including the portraits of questionable taste of "UluOndar" – "the greatest leader," as he is officially called.

"President IlhamAliyev-- a tough authoritarian leader known for his falsifications of elections, pressure over civil freedom, persecution of journalists, oppositionists, civil activists, actual repression of the opposition and the civil society in the country --actively spreads the cult of his father. Recently, under the pressure of the West, Aliyev had to soften his position to some extent and release a part of the political prisoners,"the website writes adding that it would be impossible to even imagine thatsuch graffiti could appear on the monument before.

The flower festival has been annually celebrated in Azerbaijan on May 10 since 2004. It is dedicated to Heydar Aliyev's birthday. Huge sums of money are spent on the festival. In particular, Baku City Hall published the figure 15 million dollars in 2007, and in 2013, on Heydar Aliyev's 90th anniversary, this sum exceeded 76 million dollars.

## UNESCO Is Not Political Battlefield - Armenian Minister of Culture

While getting acquainted with the recent statement by the Minister of Culture of Azerbaijan, it becomes clear that our neighboring country is once again trying to politicize and transform into a battlefield not only the field of culture, but UNESCO itself– an establishment, the mission of which is to unite and bring together nations. The attempts by Azerbaijani authorities to engage in unhealthy competition do not foster the intercultural dialogue among the nations, thus exacerbating the already tense situation in the region.

The Armenian people have created a rich culture with its unique manifestations, having enriched it via interactions with the cultures of the neighboring countries, at the same time contributing to the latter as well, while never infringing upon them. On the contrary, our neighboring country which possesses a history of less than a hundred years is making attempts to attribute to itself the traditions, history, cultural heritage and achievements of the peoples bearing histories dating back to centuries.

This also refers to the policies Azerbaijan adopts and the measures it undertakes within international organizations. This is not the first time that Azerbaijan initiates "retaliatory" measures after the items presented by Armenia for inscription on the UNESCO Intangible Cultural Heritage List are approved. Accordingly, we presented lavash and they suddenly "discovered" that lavash is their national bread and two years later submitted a nomination of their own. The same case was with the dance of Kochari. Generally speaking, in each element they are looking for their own "origins and identity" turning everything into a dispute.

The Armenian people have their thorough considerations, observations and historical facts in regard to the matter in question. We have no intention whatsoever to engage in discussions and professional debates over a process aimed at self-assertion by utilising the values of the neighboring peoples, which in its essence is neither a new, nor an effective one to follow.

Now the authorities of Baku are undertaking an unreasonable and absurd step in attempting to inscribe the traditions of preparing Tolma on the UNESCO Intangible Cultural Heritage List, as an element belonging to "the entire Turkic world". While not possessing any confidence in their own identity and relying on other nations, before submitting a nomination of an item to UNESCO one should not forget the other peoples that are bearers and practitioners of the given element. We would like to remind that the term "Turkic" refers to a huge ethno-linguistic family, which includes the Kazakhs, the Tatars, the Kyrgyz people, the Turks, the Turkmens, the Uzbeks, the Uyghurs and other peoples.

Today our neighboring country is politicizing and making a subject of dispute almost every issue, not realizing that culture is generally originated and developed for the sake of civilization and peace, while peace is the most precious value of humankind.

**Hasmik Poghosyan**
**Minister of Culture of the Republic of Armenia**

# Armenian Surp Giragos Church Receives Europa Nostra Award




ISTANBUL (Agos) -- Diyarbakir Surp Giragos Church was granted with 2015 Europa Nostra, which is one of the most prestigious awards in the field of cultural heritage. The award ceremony, which had been planned to be held in Surp Giragos, was held in Vortvots Vorodman Church in Istanbul because of the ongoing curfew in Diyarbakir. Speaking at the ceremony, Diyarbakir Surp Giragos Armenian Church Foundation Chair Ergun Ayik said, "We wish we held this ceremony in our church. We miss the good old days."

Diyarbakir Metropolitan Municipality Co-Mayor Firat Anli, writer Migirdiç Margosyan, Bakirköy Municipal Council member Margirit Dikme, former mayor of Prince Islands Municipality Mustafa Farsakoglu, former mayor of Sur Municipality Baskani Abdullah Demirbas, HAYCAR administrators, architect Korhan Gümüs, Agos Editor-in-Chieg Yetvart Danzikyan and representatives of some foundations attended the award ceremony.

Though it was announced that Archbishop Aram Atesyan will attend the ceremony, he didn't.

At the ceremony, Europe Nostra Turkey Representative Prof. Dr. Nuran Gülersoy gave an outline of the organizational structure and activities of Europa Nostra.

EU Delegation Deputy Head Andrea Schmidt pointed out the importance of restoring a church that is left without a congregation by the help of local support. Schmidt also said: "I feel sorry that we couldn't be in Surp Giragos today. We feel sorry about the people who died there, as well as the danger that the cultural heritage is faced with."

Schmidt stated that they also worry about the expropriation in Sur province.

Left to its own fate for years, Surp Giragos Church was finally restored by the great efforts of Armenian community and opened to worship in 2011. The restoration is granted with 2015 Europa Nostra, which is the most prestigious restoration award in Europe. There were 263 applicants and 28 projects won the prize in different categories. From Turkey, Surp Giragos Armenian Church in Diyarbakir was granted with the award.

# Defense Army Soldiers Discover Antique Period Necropolis in Artsakh



STEPANAKERT (Artsakhpress) -- On May 5 in the eastern part of Artsakh, during engineering works the soldiers of the NKR Defense Army have found antique necropolis.

The Deputy Director of State Service for the Protection of Historical Environment of the Department of Tourism of the NKR Ministry of Economy Diana Mirijanyan noted that during engineering works two ancient necropolis have been found, two complete finds there: trifoliate jug and a 4-piece plate.

"Now the finds are at the Department of Tourism of the Ministry of Economy of NKR, and works on cleaning are now being conducted in order to enroll them into the fund," she said, adding that soon research works will begin in this district .

Deputy Minister of Economy Sergey Shahverdyan, told Artsakhpress that the Armenian soldiers are not only defending our homeland, but also preserve our culture.

"During the 2nd World War, when a budget without cultural expenses was provided to the British prime minister, he said: "If we do not preserve culture why we need war?," quoted Mr. Shahverdyan.





# The Four Day War in Artsakh and its Political Ramifications

GLENDALE -- - The general public is cordially invited to a very special lecture presentation event, " The Four Day War in Artsakh and its Political Ramifications," on Friday, May 20th,2016 at 7:00 p.m. at Armenian Society of Los Angeles, to hear Dr. Garabet Moumdjian, a prominent Historian and Political Scientist,speak on the subject matter.

The event is organized by joint efforts of Armenian Society of Los Angeles and " Ararat Foundation " and the admission is free. There will also be a question and answer period followed by a short cultural program and a reception.

The Armenian Society of Los Angeles is located at 117 South Louise Street in Glendale and there is a convenient City parking structure located at the corner of Louise and Harvard Streets.

# AMAA Provides Food and Shelter to Evacuees from Martakert Region at Camp Bedrosian in Shushi



PARAMUS, NJ - The recent shelling of the peaceful settlements of Mataghis and Martakert regions of Karabagh resulted in major destruction. Houses, shops and community centers have been completely or partially destroyed. To ensure the safety of the citizens of Martakert region, the local population has been evacuated, while the fathers and adult males of these families remaining on the frontline defending the Homeland.

Martakert Evacuess having their lunch at Camp Bedrosian in Shushi 5The evacuees were provided temporary shelter by the NKR government. Some evacuees were accommodated in Stepanakerd, and some took shelter in Armenian Missionary Association of America's (AMAA) Camp Bedrosian in Shushi until safer conditions prevail. Camp Bedrosian is currently housing around 180 people (about 120 of them are children and teenagers) from the Maragha, Karmiravan, Mataghis, Maghavuz and Horatagh communities of the Martakert region. AMAA is providing food, shelter and organizing a Camp program for the children.

"While the courageous people of Karabagh defend the homeland, it is our absolute duty and obligation to reach out. Doing its share, the AMAA places its facilities in NKR at the disposal of our displaced kin to provide safety and security in a comfortable temporary shelter" said Zaven Khanjian, AMAA Executive Director/CEO.

To provide your support, or for additional information, you may contact the AMAA at 201.265. 2607 or e-mail info@amaa.org.

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

## Professor Taner Akçam Receives ‘Friend of the Armenians’ Award



CLEVLAND (Clark News) — Clark University History Professor Taner Akçam received the “Friend of the Armenians” award from the Diocese of the Armenian Church of America (Eastern) at a banquet of the Diocesan Assembly on April 29 in Cleveland. Hundreds of Armenian Church leaders from around the country attended.

“It is deeply rewarding to be recognized as a friend of the Armenians,” Akçam said. “While power, not truth, reigns supreme in politics, it is truth that wins in the fields of education and scholarship. We need to train dozens of young academics who can express the truth not as an emotional plea but as a scholarly fact.”

In his speech, Akçam (pictured) recognized two scholars, Khatchig Mouradian and Ümit Kurt, who recently earned their doctoral degrees in Armenian genocide studies from Clark’s Strassler Center for Holocaust and Genocide Studies.

“The truth is that the more academics we have working in this field the less oxygen denialism receives. Education is where the real investment needs to be made,” he said.

Every year, the New York-based Diocese of the Armenian Church of America bestows its “Friend of the Armenians” award on an individual in the public arena who has been a heroic advocate for the Armenian-American community. Past recipients have included U.S. Ambassadors Harry Gilmore and John Evans; U.S. Sens. Edward Kennedy and Robert Dole; and Massachusetts Gov. Deval Patrick.

The Diocese selected Akçam for the award because of his “history of courageous humanitarianism” and his “lifelong effort to reveal and defend historical truth of the Armenian genocide through his scholarship.”

“All of these things have done much to promote admiration, goodwill and affection for [him] throughout the Armenian-American community,” wrote Archbishop Khajag Barsamian, primate of the Diocese of the Armenian Church of America.

In recent years, Akçam has been honored with the Hrant Dink Spirit of Freedom and Justice Medal by the Organization of Istanbul Armenians, the Heroes of Justice and Truth Award from the Diocese and Prelacy of the Armenian Apostolic Churches of America and the Hrant Dink Freedom Award from the Armenian Bar Association. In 2006, he was recognized by the Commonwealth of Massachusetts for his outstanding work in human rights and for fighting genocide denial.

Akçam is the Robert Aram, Marianne Kaloosdian and Stephen and Marian Mugar Chair in Armenian Genocide Studies. He received his doctorate in 1995 from the University of Hanover, with a dissertation on “The Turkish National Movement and the Armenian Genocide against the Background of the Military Tribunals in Istanbul Between 1919 and 1922.”

## Victory Day, Shushi Liberation Celebrated

**Continued from page 1**

Baghramian, Sergei Khudyakov (Armenak Khanferiants), Amazasp Babajanian, Sergei Aganov and Ivan Isakov (Hovhannes Ter-Isahakian). Three of the four Soviet Marshals were born in Nagorno-Karabakh (Artsakh).

More than 60 Armenian generals were in command of large military groups of the Red Army. Some 70,000 Armenian soldiers, officers and generals were awarded orders and medals for courage, with 27 of them being full recipients of the Order of Glory. One hundred and three Armenians received the highest award – Hero of the Soviet Union.

Twenty-four years ago, on May 9, 1992, the Armenian troops liberated Shushi.

For 24 years, each person saying ‘May is a month of victories’ implies the liberation of Shushi as well. Both in school textbooks and in electronic encyclopedias, the truth is that the liberation of Shushi was a feat of arms of Armenian freedom-fighters, which proved crucial for further course of the Artsakh war.

In independent Armenia’s history the liberation of Shushi is called “A wedding in the mountains.” It was because the then minister of defense Vazgen Sargsian promised to get married if the operation proved a success.

May 9 is the official date of formation of the Nagorno-Karabakh Defense Army.

A number of events to celebrate the holiday are planned in Armenia.

## Movie Screening of "The Cut" at Ararat-Eskijian Museum




Ararat-Eskijian Museum Presents the Award-Winning Movie "The Cut" followed by a conversation with screenwriter Mardik Martin, moderated by independent producer Ani Hovannisian on Sunday, May 15, 2016, 3:00 p.m. Ararat-Eskijian Museum/Sheen Chapel 15105 Mission Hills Road, Mission Hills CA 91345.

Directed and written by acclaimed Turkish director Fatih Akin with Armenian screenwriter Mardik Martin, the film provides a vivid portrayal of the Armenian Genocide through the heart-wrenching saga of one family. It highlights the continuing struggle to regain lost hope in the face of overwhelming destruction.

Mardik Martin, a close friend and colleague of Martin Scorsese, is among the most accomplished screenwriters in American film history. He is hailed for his work in classics including Raging Bull, Mean Streets, and New York, New York, among many others. In his latest and most personal collaboration, The Cut, he says, “We tried to tell the truth and that is all it is.” Martin is also a professor at USC’s School of Cinematic Arts. From Baghdad to New York to Hollywood, Martin’s trek has been legendary.

Ani Hovannisian has produced stories for many television shows, including FOX’s Medical Miracles specials, TLC’s How’d They Do That?, CBS’s Most Fascinating Women and syndicated Extra, along with videos that have earned multiple Telly and other awards. Ani was an anchor at Horizon Armenian Television for a decade. She recently returned from Historic Armenia with footage and stories to be featured in her upcoming documentary film, The Hidden Map. The event is dedicated in honor of Onnik K Kouyoumdjian patron of the museum.

For additional information, please contact Ararat-Eskijian-Museum at (747) 500-7585 or ararat-eskijian-museum@netzero.net. Free admission open to the public



## ԴՈԿՏ. ՀՐԱՆԴ ԱՃԷՄԵԱՆԻ ՆՈՐԱԳՈՅՆ ՀԱՏՈՐԻ ԳԻՆԵՁՕՆԸ



**ԽԱՋԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ**

Սփիւռքի հայութեան բազմավաստակ մտաւորականներէն է Դոկտ. Հրանդ Աճէմեանը, որուն պատուաբեր անունը Լիբանանի հայ գաղութէն անցած է Իրան, Ֆրանսա, ապա հասած է Լոս Անճելըս, մշտական կայք հաստատելով այս քաղաքը:

Եղած է կրթական բեղուն մշակ, հայագէտ, հրապարակագիր, երգչախումբերու ղեկավար, եւ թերթերու խմբագիր: Եղած է Մեծի Տանն Կիլիկիոյ դպրեվանքի Նշան Փալանճեան ճեմարանի սան: Հետեւած է Սպահանի համալ-սարանի հայագիտական ամպիոնի դասընթացքներուն եւ Փարիզի Սորպոն համալսարանի ֆրանսական արդի գրականութեան եւ Արեւելագիտութեան դասընթացքներուն, եւ այս աշխարհահռչակ համալսարանէն արժանացած է՝ Դոկտորայի վկայականին:

Ուրբաթ, Ապրիլ 29, 2016-ին երեկոյեան ժամը 7.30-ին, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Գույումճեան սրահին մէջ տեղի ունեցաւ, բառին խորագոյն իմաստով խիստ շահեկան ձեռնարկ մը: Այդ օր տեղի ունեցաւ Դոկտ. Հրանդ Աճէմեանի «Հայ Եկեղեցւոյ Շարակնոցը եւ այլ Միասմատեանները» խորագիրը կրող հատորի գինեձօնը:

Այս հատորը կը հանդիսանայ Հրանդ Աճէմեանի 12-րդ գիրքը:

Ձեռնարկը իր օրհնաբեր ներկայութեամբ կը պատուէր Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Ամերիկայի եւ Գանատայի Առաջնորդ՝ Արհիապատիւ Տէր Միքայէլ Եպս. Մուրատեան: Հայ Առաքելական Եկեղեցւոյ Առաջնորդներ՝ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան եւ Գերշ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան իրենց ներկայացուցիչներով եւ նամակներով ներկայ էին այդ ձեռնարկին, ինչպէս նաեւ Անարատ Յղութեան քոյրերէն՝ առաքինազարդ քոյր Լուսիան:

Եկեղեցւոյ ժողովրդապետ՝ Հայր Անտոն Վրդ. Նորատունկեան բարի գալուստի եւ բացման ջերմ խօսքով ողջունեց ներկաները եւ հրաւիրեց Եկեղեցւոյ Մշակութային Յանձնախումբի ժրաջան ատենապետ՝ Զմմառու Դպրեվանքէն շրջանաւարտ՝ ծանօթ հրապարակագիր Անթուան Գարամանլեանը վարելու համար այս ձեռնարկը:

Հանդիսավարը շատ գեղեցիկ եւ տպաւորիչ ելոյթով, խօսեցաւ ձեռնարկին մասին եւ տուաւ գիրքի հեղինակ՝ Դոկտ. Հրանդ Աճէմեանի կենսագրութիւնը, անոր ծանրակշիռ ու հարուստ վաստակը ներկայացնելով:

Երգով ելոյթ ունեցաւ Վաչէ Հայրապետեան՝ «Խնկի ծառի նման ես» եւ «Ով պարոնզպան» երկու մեղեդիներ երգեց, առաջինը նուիրուած էր Ս. Աստուածածնին, իսկ երկրորդը՝ Յարութեան, հմայելով բոլոր ներկաները:

Ապա, հանդիսավարը հանգամանօրէն ներկայացուց գլխաւոր բանախօսը, Հայ Առաքելական Եկեղեցւոյ բարձրաստիճան եւ հմուտ շարականագէտ, 2800 շարականներու գրաբարէ աշխարհաբար թարգմանութեան վիթխարի հատորին հեղինակ, Մեծի Տանն Կիլիկիոյ Արեւմտեան թեմի նախկին Առաջնորդ՝ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թաբագեան:

Եփրեմ Սրբազանը մօտ 15 վայրկեան տեւողութեամբ սքանչելիօրէն ներկայացուց երբեմնի դասընկեր եւ Իրանի մէջ զանազան պաշտօններով պաշտօնակից՝ Դոկտ. Աճէմեանի այս գիրքը: 182 էջնոց գիրքը բաժնուած էր երկու մասի: Ա. մասը կը բովանդակէր Հայ Եկեղեցւոյ շարականներու ծագումը, աղբիւրները, կառուցուածքը, երաժշտութիւնը եւայլն, իսկ Բ. մասի մէջ Դոկտ. Աճէմեան ներկայացուցած է մօտ 24 շարականագիրներու կեանքը եւ անոնց իւրաքանչիւրի գլխաւոր գործերը, անշուշտ հսկայ աղբիւրներ եւ լուսաբանութիւններ տալով:

Հեղինակը օգտագործած է 40-է աւելի աղբիւրներ այս գիրքի պատրաստութեան համար: Ինչպէս ըսինք, Եփրեմ Արքեպիսկոպոսը որպէս հմուտ շարականագէտ մեծապէս արժեւորեց այս գործը, շնորհաւորեց հեղինակը «վարձքդ կատար» ըսելով:

Եփրեմ Սրբազանի այս ելոյթը արժանացաւ ներկաներու երկարատեւ եւ յոտընկայս ծափահարութեան:

Ապա Վաչէ Հայրապետեան երգեց «Անձինք Նուիրեալք» եւ «Որք Զարդարեցին» շարականները, արժանանալով ժողովուրդի պոռաւօններուն:

***

Սրտի խօսքերով ելոյթ ունեցող Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ժամանակակից շրջուն հանրագիտարանը՝ Դոկտ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան, որ շատ հետաքրքրական տեղեկութիւններ տուաւ, թէ Դոկտ. Աճէմեանի գիրքին եւ թէ 301-450 թուականներու Սաղմոսերգութեան եւ շարականներու փոխանցման մասին:

Կրեկ Սարոյեան, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ երգչախումբին ժրաջան ղեկավարը, ինք եւս Զմմառու մայրավանքի սան ըլլա-

Շար.ը էջ 19

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

## »ՅՈՒՇԵՐԻՍ ՀԵՏ«

### ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

Շնորհակալութեամբ ստացանք հանրածանօթ լրագրող եւ մտաւորական Վահան Բահարեանի «Յուշերիս Հետ» անուանումով, շքեղ եւ գունաւոր շապիկով մեծածաւալ գիրքը, 448 էջերից բաղկացած: Հեղինակը ծանօթ անուն է մեր համայնքում, ինչպէս նաեւ Հայաստանում եւ սփիւռքի զանազան հայաբնակ ծայրա-մասերում: «Յուշերից հետ» պատկերազարդ հատորը հեղինակի 3րդ աշխատութիւնն է, որն հրամցւում է հայ ընթերցողին: Գրքի առաջաբանը գրել է բնասիրկան գիտութիւնների դոկտոր պրոֆեսոր Արտեմ Սարգսեանը որն իր առաջաբանով ներկայացրել եւ գնահատել է վաստակաշատ հեղինակին որն հանգամանօրէն անդրադարձել է երբեմնի հայաբնակ Բէյլանին, նրա պատմութեանը, եւ ծննդավայրում ապրած հարազատներին: Ապա անդրադաձել է Բ. Աշխարհամարտից անմիջապէս յետոյ կազմակերպուած հայրենադարձութեան եւ այլ մանրամասներ յիշատակել: Գրքում տպագրուած են հարիւրի հասնող նկարներ, որոնցից մի մասը կապւում են հեղինակին եւ հայրենաբնակ իր հարազատներին: Հատորի առաջին էջերում դրուած են Վահան Բահարեանի ծնողների նկարները:

Հեղինակը սիրով այս հատորը նուիրել է նրանց յիշատակին:




Պատմական արժէք ներկայացնող «Յուշերիս Հետ« ծաւալուն հատորը ընթերցուելիք մի աշխատութիւն է, որն միաժամանակ պատմութիւնն է աշխարհացրիւ հայութեան մի բնակավայրի, որից մեծապէս կ'օգտուեն մեր պատմաբանները: Գիրքը տպագրուել է 2015 թուին Երեւանում «Զանգակ» հրատարակչութեան միջոցով: Տեխնիկական բոլոր աշխատանքները կատարուել են հեղինակի կողմից: Մեզ մնում է ասել վարձքդ կատար յարգելի Վահան Բահարեան:

Ն.

## Ա. ԵՒ Մ. ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՍԱՑԱՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄԻՆ



Արարատ Տան կազմակերպած հայոց պատմութեան տարեկան զարգացման մրցանքը, որ տեղի կ'ունենայ Հարաւային Գալիֆորնիոյ մէջ գտնուող Հայկական բոլոր վարժարաններուն Ը. կարգը ներկայացնող աշակերտական խումբերուն միջեւ, այս տարի տեղի ունեցաւ Ապրիլ 17, 2016ին Արարատ Տան Տէօքմէճեան Սրահին մէջ: Սոյն ձեռնարկը կազմակերպած էր Արարատ Տան անձնակազմը, հետեւողութեամբ Տէր եւ Տիկին Յակոբ եւ Մարիլին Արշակունիներուն, որոնց հեղինակած Արմէնեան Դիմէյինէ գիրքը կ'օգտագործուի իբրեւ դասագիրք եւ աղբիւր պատրաստուելու համար սոյն մրցանքին:

Այս մրցանքին Յովսէփեան Վարժարանը ներկայացուցին Ը. կարգէն չորս աշակերտ վեց աշակերտուհիներ՝ Այնթէպլեան Սէրա, Աստուրեան Լարիսա, Գալուստեան Ալէքսանդր եւ Քէշիշեան Սեդրակ: Պատրաստութեան երկար ժամանակ խլող զարգացման մրցման, դպրոցիս աշակերտները ընդհանուր 69 կէտերէն 68ն կրցան ապահովել եւ մասնակցող 8 հայկական վարժարաններուն մէջէն հանդիսացան առաջին:

Իրապէս գնահատելի է սոյն աշակերտ-աշակերտուհիներուն տարած աշխատանքն ու ցուցաբերած լրջութիւնը, ինչպէս նաեւ օրինակելի է անոնց ծնողներուն ունեցած յարգանքը զարգացման մրցման եւ ցուցաբերած քաջալերանքը իրենց զաւակներուն հանդէպ՝ նման մրցման մը պատրաստութեան եւ մասնակցութեան ընթացքին:

Ինչպէս նաեւ կ'արժէ նշել հայերէնի դասատուին՝ Տկն. Լիզա Մանոյեանին անսակարկ նուիրումը սոյն խումբին պատրաստման աշխատանքներուն ընթացքին:

Կ'արժէ նաեւ նշել, որ վերջին 6 տարիներուն ընթացքին Յովսէփեան Վարժարանը 4 անգամ հանդիսացած է առաջին, մէկ անգամ երկրորդ եւ մէկ անգամ ալ երրորդ:

# ՉԵԼԷՊԻԻՆ «ԽՈՍՏՈՒՄԸ»

*ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ*

*Սաթենիկ Գրիգորեան ծնած է Բաղէշ (Պիթլիս), 1894-ին: Փոքր տարիքէն ամուսնացած է բաղէշցի Վաղարշակ Պապայեանին հետ: Պապայեան-Գրիգորեան ընտանիքները քաներորդ դարու սկիզբը կը փոխադրուին Միացեալ Նահանգներ: Սաթենիկ, հազիւ տասնչորս տարեկան էր, երբ կ'ունենայ իր առաջին մանչ զաւակը՝ Սուրէն, իսկ երկու տարի ետք՝ Արաքսին: 1908 թուականին Վաղարշակ, եւ Սաթենիկ իրենց երկու փոքր երեխաներով կը վերադառնան Բաղէշ: Իսկ Բաղէշ՝ Պիթլիս վերադարձը...: Երեւի հողին կարօտն էր...: Պատմական Սասնայ Ջորին գիրկը, գեղեցիկ Վանայ լիճին հարաւ արեւմուտքը տարածուած Տաւրոս ու Բիւրակնեան լեռներուն եւ Տիգրիս գետին միջեւ: Աւելի՛ն, ան իր հարթ ու տաշուած թխագոյն քարերով կը գգլխէ ու կ'անցնի ամէն գեղեցկութիւն: Հաւանաբար այս նոյն գեղեկցութիւնն էր գրաւողը, բայց նաեւ կան հողին կարօտը՝ ու անոր կանչը, որոնք մղեցին Ուիլիըմ Սարոյեանը եւս երթալու Բաղէշ, Պիթլիս՝ հետեւելու ինք ալ իր ծնողաց ինքնութեան եւ արմատներուն, նաեւ՝ կանչին, այդ ալ Վաղարշակէն շատ տարիներ ետք:*

*Վաղարշակ Բաղէշի մէջ կը հիմնէ գորգի գործարան մը, բայց վրայ կը հասնի Համաշխարհային Ա. պատերազմը, 1914-ին, եւ Պապայեան ընտանիքը չի կրնար դուրս գալ Թուրքիայէն եւ անոնք եւս «կը ճաշակեն» «իրենց արեան ճակատագիրը՝ բոլոր հայերուն նման քալելով «մահուան շուքի ձորին մէջէն»: Բայց եւ այնպէս անոնք պիտի ունենային «վահան» մը՝ ապահով «լաստը», որ պիտի փորձէր հասցնել զիրենք խաղաղ ջուրերը:*

*Այդ «լաստը» բժիշկ Մուսթաֆա Չելէպին էր: Հալէպ ծնած եւ նոյն քաղաքին մէջ արմատ նետած ծանօթ ընտանիք-գերդաստանի զաւակ, որ իր բժշկական ուսումը ստացած էր Պոլսոյ եւ Ֆրանսայի մէջ ու դարձած ծանօթ ակնաբոյժ: Զինակոչուած է Օսմանեան կայսերական բանակին մէջ 1914-ին՝ որպէս սպայ, եւ նշանակուած Պիթլիսի զինուորական հիւանդանոցի պետ: Պիթլիսի մէջ է, որ ծանօթացած է Վաղարշակին, Սաթենիկին ու անոնց ընտանիքին եւ բարեկամացած անոնց հետ:*

*Թէեւ Մուսթաֆա Չելէպիի կեանքը առնչուած է Վաղարշակին եւ Սաթենիկին հետ, բայց ան նաեւ ուղղակի կապ ունի այն քառասուն հայ պատանի-երիտասարդ աղջիկներուն հետ, որոնց կեանքերուն վահանն ու պահապանը եղաւ Ցեղասպանութեան տարիներուն: Այս հայ աղջիկները գիշերօթիկի սանուհիներ էին Բաղէշի Ամերիկեան Մաունթ Հոլիաք վարժարանին մէջ: Անոնք կու գային շրջանի տարբեր գիւղերէ եւ Մշոյ դաշտէն, սակայն անոնց կեանքը մթագնեցաւ 1915-ի ամրան:*

*Վաղարշակ Պապայեան զգաց հայերուն գլխուն կոտմը սուրացող արիւնոտ փոթորիկին մօտալուտ ըլլալը: Վարդգէս Ահարոնեանն է՝ Աւետիս Ահարոնեանի զաւակը, որ նաեւ կամաւոր քաջամարտիկ էր զօրավար Անդրանիկի բանակին մէջ: Իր յուշերուն մէջ գրած է Վաղարշակի խօսակցութիւնը Չելէպիի հետ: «Տոքթո՛ր, ես գիտեմ մեր՝ հայերուս գլխուն գալիքը: Եթէ օր մը թուրքերը զիս սպաննեն, կը խնդրեմ, որ եթէ կրնաս, փրկես կինս եւ զաւակներս»:*

*Բաղէշի հայութիւնը ջարդուեցաւ եւ Վաղարշակ եղաւ այդ կոտորածի առաջին զոհերէն մէկը: Թուրքերը Վաղարշակը տարին ոստիկանատուն, ու դարձեալ Վարդգէս Ահարոնեան կը գրէ Սաթենիկի եւ Վաղարշակի հնգամեայ զաւկին, այդ օրերուն մանուկ, բայց չմոռցուող յուշերուն ընդմէջէն...: «Տոքթորը գիտէր, որ հայրս թոյն բաժնած էր, որ թուրքերու ձեռքը չիյնանք, այլ թոյնով մեռցնենք մենք մեզ: Տոքթորը ասիկա գիտնալով, խստիւ պատուիրեց մեզի, որ չըլլայ որ թոյն խմենք ու խոստացաւ ամէն ձեւով հոգ տանիլ մեզի»:*

*Վաղարշակ ոստիկանատան մէջ թոյնը խմած եւ մեռած էր, թուրքերու չարչարանքներէն ազատելու համար: Իսկ տոքթ. Չելէպին պիտի յարգէր իր բարեկամին տուած «խոստումը»՝ փրկելու Սաթենիկը եւ անոր երկու զաւակները: Բայց կար նաեւ Չելէպիին մարդկային խղճին «խոստումը»՝ փրկելու նաեւ Ամերիկեան դպրոցի հայ պարմանուհիները: Եթէ Չելէպին Սաթենիկը եւ իր երկու զաւակները պատսպարեց իր մօտ, բայց չարունակեց տքնիլ փրկելու համար քառասուն հայ աղջիկները:*

*Մուսթաֆա Չելէպին կրցաւ համոզել թուրք սպաները, թէ որեւէ օգուտ չունի աղջիկները սպաննելը: «Բանակը կարիք ունի հիւանդապահներու, ճաշ եփողներու ու տակաւին շատ մը այլ գործեր ընող աղջիկներու», -ըսաւ ան: Չելէպին կրցաւ համոզել թուրք սպաները, որ հայ աղջիկները աշխատին Պիթլիսի հիւանդանոցին մէջ:*

*Եւ այս անգամ պատմողը Արտեմիսն է՝ քառասուն հայ աղջիկներէն մին: «Հիւանդանոցը ճաշ տանող փոքր աղջիկներէն մէկը ես էի: Մեզի հիւանդանոց տանողբերողը Հասան անունով թուրք մըն էր, իսկ հիւանդանոցի վերակացուն Մամագ Ջաւուշ անունով թուրք մը, որ լաւ հայերէն կը խօսէր»: Ու դարձեալ Արտեմիսն է: «Երբ հայերէն կը խօսէինք իրարու հետ, Մամագ Ջաւուշը կը սաստէր մեզ, որ թրքերէն խօսինք ու կ'ըսէր. «Ա՛լ հայերը վերջացան, Աստուածը չօգնեց անոնց»:*

*Մուսթաֆա Չելէպին ջանք չխնայեց հայ աղջիկներուն կեանքերը ապահովելու համար: Նոյնիսկ առիթ չտուաւ, որ հիւանդ ու վիրաւոր զինուորները, որոնք հիւանդանոց կը բերուէին, որեւէ ձեւով «ցանկութիւն» ունենային անոնց նկատմամբ: Ան կրցաւ «պահել» հայ աղջիկները մինչեւ այն օրը, երբ հրահանգ տրուեցաւ, որ բոլորը քաղաքէն հեռացուէին, իսկ Արտեմիս գիտցաւ ինչ պիտի ըլլայ. «Այդ կը նշանակէր, որ մեզ պիտի տարագրէին եւ սպաննէին...»:*

*Բայց չհասան այդ մէկը կատարել, ռուսական բանակն ու հայ մարտիկները հասած էին Բաղէշ: Օր մըն ալ Հասանը հիւանդանոցին թուրք վարորդը շնչասպառ կը մտնէ հիւանդանոց եւ մեծ աղերսանքով. «Հայ ֆետայիները քաղաքը լեցուեր են, զիս եթէ բռնեն կը սպաննեն, կ'աղաչեմ ազատեցէք զիս»:*

*Հայ կամաւորները կը մտնեն հիւանդանոց, ուր ներկայ էր նաեւ տոքթ. Մուսթաֆա Չելէպին՝ իր օսմանեան բանակայինի համազգեստով: Հայ կամաւորները կը յարձակին անոր վրայ՝ սպաննելու զայն, սակայն այս անգամ Չելէպին փրկող-պահողները կ'ըլլան հայ աղջիկները, որոնք կը նետուին տոքթորին եւ հայ մարտիկներուն միջեւ, լալով ու աղաչանքով կը բացագանչեն: «Ի սէր Աստուծոյ, խնայեցէք այս մարդը: Ան է մեզ ազատողը, մեզ փրկողը»:*

*Գերի բռնուողներուն մէջ կ'ըլլայ նաեւ Մամագ Ջաւուշը՝ հիւանդանոցին վերակացուն: Արտեմիսն է՝ ինքնավստահ եւ չարախինդ կերպով:*

*-Նա սըլըըն (ինչպէ՞ս ես) Մամագ Ջաւուշ:*

*-Ձեր Աստուածը շատ զօրաւոր է, -կը պատասխանէ Մամագ Ջաւուշ հայերէնով...:*

*Հայ կամաւորները Չելէպին կը յանձնեն ռուսական բանակին, որ զինք, թուրք սպաներու հետ գերի կը տանին Ռուսիա:*

*Բայց կար Չելէպիին «խոստումը» տրուած իր Վաղարշակ բարեկամին, թէ պիտի «պահէր» անոր ընտանիքը: Գերի տարուելէ առաջ ան դասաւորում կ'ընէ, որպէսզի Սաթենիկ եւ իր երկու զաւակները ապահով հասնին Հալէպ՝ անոր ընտանեկան բնակարանը: Եւ քառասուն ազատագրուած հայ աղջիկները կը սկսին նոր կեանքի...: Անոնցմէ ոմանք կ'ամուսնանան հայ մարտիկներուն հետ, որոնք զիրենք ազատեցին, իսկ միւսները կը միանան իրենց հարազատներուն Ամերիկա թէ այլուր:*

*Մուսթաֆա Չելէպին երկու տարուան գերութենէ ետք ազատ արձակուելով կը վերադառնայ Հալէպ: Ան Սաթենիկին կը ներկայացնէ երկու առաջարկ՝ վերադառնալ ընտանիքին (իր ծնողացը, որոնք Ամերիկա էին) եւ կամ հաստատուիլ նորաստեղծ անկախ Հայաստան, իսկ եթէ կը փափաքի իր կեանքի ընկերը դառնալ: Սաթենիկ սիրայօժար կ'ընդունի ամուսնանալ Չելէպիի հետ:*

*Չելէպի կը շարունակէ հաւատարիմ մնալ Վաղարշակին տուած իր «խոստումին»: Սուրէնը եւ Արաքսին Սաթենիկի երկու զաւակները կը մեծնան հայ եւ քրիստոնեայ: Չելէպի յանձնառու կ'ըլլայ երկու պզտիկները հայկական վարժարան ղրկելու Հալէպի մէջ՝ երբ վերջինը նոր կը հիմնուի գաղութին մէջ Ցեղասպանութենէ եւ տարագրութենէն ետք: Իսկ Սաթենիկ միշտ ալ կը մնայ Չելէպի ընտանիքին շատ յարգուած հայ հարսը՝ «Մատամը»...:*

*Տոքթ. Մուսթաֆա Չելէպի՝ որպէս ակնաբոյժ, եղաւ մտերիմ գործակից-բարեկամ մը հօրեղբօրս՝ տոքթ. Ռոպէր Ճէպէճեանին: Չելէպիին եւ անոր վեհանձն ու մարդկային նկարագիրին մասին յաճախ լսած եմ մեր ընտանեկան զրոյցներուն ընթացքին: Տոքթ. Ռոպէր Ճէպէճեանի յուշերէն. «Հայ զինուորները գիտնալով, որ արաբ բժիշկը ազատարարը եղած էր հայ աղջիկներուն, զանոնք որպէս հիւանդապահ պահելով իր հիւանդանոցին մէջ, կը փութային իմաց տալ զօրավար Անդրանիկին: Զօրավարը անյապաղ կու գար անձամբ եւ ի սրտէ շնորհակալութիւն յայտնելու եւ արաբ բժիշկին կը յանձնէր պատուոյ գիր»:*


ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ-ՉԵԼԷՊԻ
1894-1963


ԲԺԻՇԿ ՄՈՒՍԹԱՖԱ ՉԵԼԷՊԻ
1873-1959

*Շար.ը էջ 17*


## ՍԱՀԱԿԵԱՆԻ ՕՐ

Կազմակերպութեամբ՝

***ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ***

**ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԴԱՐՁԱԾ**
**«ՍԱՀԱԿԵԱՆԻ ՕՐ»ՈՒԱՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ**

Կիրակի, 15 Մայիս, 2016
կէսօրէ ետք ժամը 4:00ին,

Փասատինայի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ,
1060 North Allen Avenue, Pasadena CA 91104:

Կը խնդրուի յարգել Սահակեանցիի ժամադրութիւնը:
Ճոխ հիւրասիրութիւն, անակնկալներ...

Մուտքը ազատ

# ՆԵՐԲՈՂ ՄԱՅՐԵՐԻՆ

**ՊՕՂՈՍ ԱՐՄԷՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ**

*Մայիսի ութն է, տօնական լոյսի հրավառութիւն թող լինի այսօր, բամբիռներ թող զարկեն այսօր, թող արեգակը իջնի երկիր, մայրերի հրաբորբ ողջոյնը տանի տիեզերքի "Տիր Կաթին" աստղաբոյլի՝ "Վահագն Յարդագողի Ճանապարհ"-ի տաճար՝ Արմինա-Հայաստանի "Ոսկեծին, Ոսկեմայր" Մայր Անահիտ դիցուհուն: Աստղերը մի պահ թող կանգնեն, իրենց լոյսի թրթիռներով ողջունեն մոլորակի մայրերին: Այս իրիկուն, արեւի քոյրիկ լուսնեակը իր կաթնաթոյր համբոյրը թող շաղի մայրերի ճակատներին: Միշտ զուարթ լոյս թող յորդի Արմին-Հայերի հէքիաթային աշխարհի մայրերի դէմքերից, իրենց սրտերի բոցավառ ծովակների տիեզերական սէրը գեղի որդիների սրտերին: Մայրերի փառաբանման հրաշավառ տօնախմբութիւն թող լինի այսօր, նրանց սիրոյ, գուրգուրանքի տիեզերական խորհուրդի պատարագ լինի: Արմինա-Հայաստանի մարդկանց օճախները թող միշտ հրդեհուեն մայրական սիրոյ հրճուանքի բոցերով: Արմին-Հայերի արի նախնիները աստուածացրել են մայրերին, պաշտամունք է եղել այն, նրանց պատուին տաճարներ են պատել: Մայրը բնութեան ծաղկման պաշտամունքն է, մայրը "Աստուածածին" եղաւ, որ մարդկանց սրտերին սիրոյ ու խաղաղութեան լոյսի ջահեր վառուեն:*

*Այսօր, երկրի ծիածանափայլ հրաշք ծաղիկները մայրերի լանջերը թող գգուեն: Սիրոյ բոցերով վառուող վարդերը ծիածան փուեն իրենց օճախներում, նրանց կարմիր կրակ բոցերը խայտան նրանց դէմքերին, մայրական քնքուշ ժպիտ հոսեն նրանց ակներին: Մայրական ժպիտ... Աստղիկ դիցուհու ձնծաղիկի հազար գոյների լոյսն է այն: Վարդ, ծաղիկների թագուհի, ծաղիկը բնութեան արարչութեան աքանչանքն է, նրա տեսքից հոգիդ լցւում խինդով, նայի՛ր, նայի՛ր նրան, արեւի լոյս է այն, արեւի հրաբորբ խինդ պիտի հոսի սրտիդ, հոգուդ տաճարի կանթեղները պիտի վառուեն: Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէսը, վարդատօն էր հիմնել, մինչեւ այսօր էլ Արմին-Հայ արիասիրտ մարդիկ, արեգակի բոսոր լոյսով վառուած վարդերը վեր պահած, ամէն Մայիսին այցի են գնում Աննայի սիրով յօշոտուած Սայեաթ Նովու գերեզմանին շաղ տալու:*

*Մայիս, գարնան սիրուն ամիս, արեգակն է իր տաքուկ շունչը հոսում Արմինա-Հայաստան աշխարհին: Անահիտ Դիցուհին է «Վահագնի Յարդագողի Ճանապարհ»-ի տաճարից գալիս Արմինա-Հայաստան, սիրոյ հուր հոսում հայոց աշխարհին, նրա խանդաղատանքից բնութիւնն է ծաղկում, նրա թովչանքից ծառերն են փթթում, փթիթ բողբոջներ պայթում, արեւին են բացւում հազար-հազար գոյների ծաղիկներ: Ծաղիկը բնութեան առեղծուածն է, մայրն էլ բնութեան ծաղիկն է, բնութեան յաւերժութեան պատարագն է:*

*Մայիս, բնութեան աքանչանքից ծաղկում է մարդու հոգին, ծաղկում են սրտերի ցորեանի հասկերը: Մուսա Լեռան լանջերից յառնած հովիկների թեւերին բազմած անցել հայրենի ոսկեշաղ փրփրած արտերով, ծաղկած ցորենի բոյրը հոգուս ամբարած՝ հասել Արմինա-Հայաստան աշխարհ: Ցորեանի հասկերի ծաղիկ, մայր բնութեան բոյրն է այն, ափերով հաւաքել նրա մանրիկ ծաղիկները տարել մայրիկիս, կարօտել եմ նրա բոյրին...: Ծաղկում են այգիները, դափնիները, հրճուել եմ հովիկներին եւած ծաղկաթերթիկների նազանի պարից, ցատկել բռնել նրանց, հաւաքել կարմիր կապոյտները, տարել «Օշական» Հայերէն լեզուի դասագրքիս էջերում շարել: Այգիները ժպտում են արեւին, մտի՛ր այգիներ, ժպտա՛ նրանց բոսոր տեսքին, արեւն է այնտեղ իջած համբուրում ծաղիկների շրթները: Հայոց աշխարհի լեռների լանջեր, ծառերն իրենց կանաչազարդ թեւերն են երկինք պարզել, երկնի կապոյտը գգուելու: Բնութիւնը՝ Մայր Անահիտի հրաշափառ արարչութիւնն է, հողը բնութեան սրբագործ արարումն է, իր տաքուկ բոյնում սնուցում բոյսերը, ծառերը: Որպէս մայրութեան սրբագնացում՝ հողը մայրենի ենք կոչում, երկիրը մայր հայրենիք, գետը մայր Արաքս, ծառը մայրի:*

*Մայրերը, իրենց ձեռքերը վեր պահած սիւն են դարձրել, որ չփլուէին իրենց զաւակների տները: Մայրութեան ինչքա՜ն սիրով է լցուած եղել մի իմաստասէրի սիրտը, որ յանդգնել էր ասելու, Աստուած էլ կը գտնես, սակայն, յաւերժութիւն դարձած մօրը ինչպէ՞ս կը գտնես...: Աստուածային լեցուն բարութեամբ մայր, ըստ մի այլ մտածողի, պատուիրել էր, մահից յետոյ ձեռքերը անդամահատել, նրանով ծեծէին փոքրերին, նրանց ցաւ չպատճառելու համար:*

*Մոլորակի մարդիկ, Մայիս ամսին են «Մայրութեան» փառաբանման տօն հիմնադրել, որ նաեւ գարնան խինդով առկայծէին իրենց սրտերը: Արմին-Հայերի նախնիները իրենց ոստանը քաղաքամայր են կոչել, երկիրն իրենց Մայր-Հայաստան, իրենց խօսած լեզուն մայրենի: Մայր Հայաստանը, յաղթ կանգնել է իրենց ոստանի բարձունքին, սուրը պատեանից հանած, պատրաստ նրա պաշտպանութեան կռուին գնալու: Միայն Արմին-Հայերի նախնիներն են աստուածացրել մայրութեան պաշտամունքը: Արմինա երկրում միայն Մայր Անահիտի ու աստուածամարդ Խալտի-Հայկի արձաններն էին ոսկեձոյլ: Մայր Անահիտի տաճարներ էին կառուցել Եկեղեաց գաւառի Երիզա աւանում, աստուածների քաղաքներ՝ Բագարանում, Աշտիշատում:*

*Ապրիլի վեցին, Արամազդի դուստր Մայր Անահիտ Դիցուհու փառքի տօնախմբութիւնը կատարում էին աստուածների քաղաք Բագարանի տաճարում: Նրա հրապարակում էին Արմինա-Հայաստանի արքան, արքայազուններ, նախարարներ, սեպուհներ, բազմահազար աշխարհային ժողովուրդ: Արքան, Տարօն աշխարհի ցուլի պախուրցից բռնած, քրմապետի հետ մեհեան էին մտնում, իրենց հաւատքի արարողութիւնով այն զոհաբերում Անահիտի բագինի առաջ: Ցուլի տաք արիւնն էին շաղ տալիս նրա մարմնին, այն շիթշիթ հոսում ներքեւ, բոլորը իրենց ճակատները դրոշմում էին Միհրի լոյսի կեռուած նշանով... խաչ: Աշխարհային մարդիկ իրենց բերքի երախայրիքն էին նուիրաբերում Անահիտին: Մեհեանի մուտքի մօտ գինու լեցուն տիկեր էին, գինով լեցուն թասեր էին զարկում, շնորհաւորում Անահիտի ծնունդը, արքան, բոլորը արբեցել էին, գինու արթնած աշխարհիկ վայելքն էր այն: Գուսանները, իրենց տաղերով Անահիտ աստուածուհու գովքն էին անում: Շուրջ պարեր էին բռնում, հայոց արքան էլ պարի էր ելել, ծիրանի պարեգօտի ու վեր պարզած կարմիր թաշկինակի լոյսն էր ողողել մեհեանը, գինով զուարթացած թմկահարը ուժգին զարկում էր թմբուկը, թնդում էր մեհեանը, կանչում էին Անահիտ, եկո՛ւր դու էլ պարի շարքեր մտիր:*

*Հնդիկ արիացիները, պարթեւները, շումերները իրենց երկրներ էին տարել Անահիտին, նրա մայրութեան արարչութիւնը հոսէր իրենց երկրների արտերին, լեռների լանջերին: Պարթեւացի արքայասպան Անակի որդի Սուրէն-Գրիգորը մարել էր Անահիտի փառաբանումը, նրա մայրական արարչութեան ոգու շունչը: Անահիտ Դիցուհու ծնունդի յաջորդ օրը՝ Ապրիլի եօթը, հռչակել էր հրեայ Գաբրիէլ Հրեշտակապետի «Աւետման Օր», Քրիստոնեայ աշխարհում մայրութեան տօնական օր: Արմին-Հայը գոյատեւում է իր նախնիների աւանդութիւնները, նրանց հաւատքի ոգին իրենց հոգիներում ամուր պահելու շնորհիւ: Արմինա-Հայաստանի ոստանում, աքանչելի արիացի տղաներ, հազար-հազար արմիններ Միհրի տաճարում տօնախմբում են Մայր Անահիտի, Վահագնի, Միհրի, իրենց աստուածների ծնունդ, տեսնէ՜ք ինչպիսի՜ խանդաղատանքով փառաբանում նրանց, անուշ քրմուհիները երգում հին հաւատքի շարականներ, ծիրանի փողեր հնչում, թմբուկ զարկում, նախնիների շուրջ պարեր բռնում, աշխարհիկ կեանքի վայելք:*

*Հռոմի Անտոնիոս անօրէն զօրավարը, Արմինա-Հայաստան արշաւանքի ատեն գերեւարել էր Անահիտի արձանը, այն տարել իր տարփածոյ Կլէոպատրայի երկիր: Անյայտ առեղծուածով, նրա անագապղնձեայ գլխամասն է հանգչում անգլիական թագաւորական թանգարանում: Արմին-Հայեր ցանկանում են այն ետ բերել, քղանցքը վրան քանդակել նրա մարմինը, գլխամասով այն կանգնեցնել Եկեղեաց գաւառի Երիզա աւանի իր ծննդավայրի մեհեանում: Հռոմի Կալիկուլա կայսրը կայսերական խնճոյք էր սարքել, երբ նրան հարցրել էին այդքան դրամ ո՞րտեղից, խոստովանել էր, որ Արմինայում գալթուած Անահիտ աստուածուհու ոսկեձոյլ արձանի ոտքի մատի արժէքով:*

*Բեմադրիչ՝ Աշոտ Մալաքեան, Արմին-Հայու արարման հանճարի լոյսը աշխարհներ տարաւ, «Մայրիկ» շարժապատկերով՝ Հայ «Մայրիկի», իր ազնուզարմ ցեղի Մայր Անահիտի պաշտամունքը հասաւ աշխարհներ, աւետեց, որ մօր սէրը՝ «Կնոջից ու գինուց առաւել» ամենամեծար է:*

*Մայրերը, հրեշտակներ են, անքուն գիշերներ իրենց մանչերի օրօրոցների մօտ օրօր են ասում, նրանց փոքրիկ մտքերը ընկալում են այն, մայրական հոգու սիրոյ անդորր է իջնում նրանց սրտիկներին՝ խաղաղութիւն դէմքերնին անուշ քուն են լինում: Արմին-Հայ բանաստեղծներ երգել են մայրութեան տիեզերական սիրոյ խորհուրդը: Բանաստեղծ Գամառ Քաթիպա երգել էր մայրերի օրօրը՝*

Քուն եղիր բալաս, աչերդ խուփ արա
Նախշուն աչերուդ քուն թող գայ վրայ:
Օրօր իմ բալաս, օրօր ու ճանի,
Իմ անուշիկիս քունը կը տանի:
Դուն ալ քուն եղիր, ինծի ալ քուն տուր,
Սուրբ Աստուածամայր, անուշիս քուն տուր:
Օրօր իմ բալաս, օրօր ու ճանի,
Իմ անուշիկիս քունը կը տանի:

*Երգահան՝ Բարսեղ Կանաչեան, Քաթիպայի երգին հնչիւններ հիւսեց, ինչքա՜ն աշում է այն հնչում, կարծես Գողթան երգիչներից է այն քաղել:*

*Եւ ուրիշ մի բանաստեղծ՝ Շիրազի վարդերի բոյրով լեցուն հայոց Շիրազ, «Տիր Կաթին-Յարդագողի Ճանապարհ»-ի Արմին-Հայ աստուածների տաճարից էր իր հետ բերել մայրերի սիրոյ զօղանջների խորհուրդը՝*

Հազար մի սիրտ բացեցի,
Ոչ մի անմեռ սէր չգտայ,
Ծովից խորունկ սէր զգացի,
Երբ մայրիկիս սիրտը մտայ:
Մօր սրտում է Աստուած ճնած՝
Լոկ մօր սրտի մէջ է զարթնում,
Աւաղ, առանց Աստուծոյ մնաց
Իմ որբ կեանքը՝ անյոյս մթնում:

*Ամերիկայի Միացեալ Նահանգներում, Ժուլիա Վարդ Հուվրը, 1872 թուականին ժողովրդային շարժում էր սկսել, որպէս խաղաղութեան ձօնուած օր «Մայրերի Օր» կատարել: 1907 թուականին, Ֆիլատելֆիայում, Աննա Ճարուիսը արշաւ էր սկսել հիմնադրելու՝ «Մայրերի Ազգային Օր»: Ճարուիսը, համոզել էր քաղաքի եկեղեցուն, մայրերին նուիրուած օրը տօնելու Մայիսի երկրորդ Կիրակին՝ իր մօրը մահուան երկրորդ տարելիցի օրը: Իր համախոհների հետ նամակներ էին յղել նախարարներին, քաղաքական գործիչներին՝ մայրերի օրուայ տօնակատարութեան օր հաստատելու: 1914 թուականին, ԱՄՆ-ի նախագահ՝ Վուտրո Վիլսոնը, նախագահական օրինագծով, իւրաքանչիւր Մայիս ամսուայ երկրորդ Կիրակին հռչակել էր որպէս մայրերի օրուայ տօնակատարութեան օր: Այժմ, աշխարհի շատ երկրներում, «Մայրերի Օր»-ը, որպէս տօնական օր, տօնախմբում են յիշատակուած նոյն օրը:*

MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry
1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205
Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476


INTERNATIONAL SOCCER WEEK
SOUTHERN CALIFORNIA CELEBRATES
ARMENIA'S 98TH
ANNIVERSARY OF INDEPENDENCE
ARMENIA
NATIONAL TEAM
VS
GUATEMALA
NATIONAL TEAM
SATURDAY, MAY 28th – 7:30PM
STUBHUB CENTER - CARSON
ARMENIA
NATIONAL TEAM
VS
EL SALVADOR
NATIONAL TEAM
WEDNESDAY, JUNE 1st – 7:30PM
Stubhub Center – Carson, CA
FOR TICKETS & INFORMATION CALL YEREVAN PRINTING 818-548-6262
TICKETS FROM $30
Also at: www.ticketon.com / www.axs.com
HOLLYWOOD:
ARBAT GROCERY 323.644.5454
PARSEGHIAN PHOTO 323.664.3365
SAHAGS BASTURMA 323.661.5311
UNIVERSAL SERVICE EXCH. 323.664.0929
PASADENA:
UNIVERSAL STOP 626.797.3333
PROSOCCER 626.402.9921
GLENDALE:
UNITED SHIPPING GROUP 818.291.9303
UNIVERSAL SERVICE EXCH. 818.500.0489
FLOR DE CAFE 818.543.1401
BAKLAVA FACTORY 818.548.7070
ANI GROCERIES 818.241.7229
UNIQUE LIQUOR/MARKET 818.945.5774
PAMPERED POOCHEZ 818.249.7297
N. HOLLYWOOD.VAN NUYS:
UNIVERSAL SERVICE EXCH. (NH) 818.761.3055
UNIVERSAL SERVICE EXCH. (VN) 818.781.2057
ARAX GROCERIES & DELI 818.705.0395
BAKLAVA FACTORY (NH) 818 764 1011
GASPAR'S FLOWER SHOP 818.708.9775
ORANGE COUNTY:
SARKIS PASTRY 714.995.6663
MONTEBELLO:
MONTEBELLO RANCH MARKET 323.728.2615
SHIRAK GROCERY & DELI 323.724.2044
WEST SAN FERNANDO VALLEY:
BAKLAVA FACTORY - ENCINO 818.981.3800
VREJ PASTRY 818.366.2526
Come. Celebrate. Support Armenia's National Team
Եկ՛էք խնդրնդրամ: Եկ՛էք քաջալերելու ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ

## «ԲԱՐՍԵԼՈՆԱՆ» ՊԱՀՊԱՆԵՑ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ

Սպանիայի առաջնութեան նախավերջին տուրում «Բարսելոնան» ընդունեց «Էսպանյոլին» եւ առաւելութեան հասաւ 5:0 հաշւով:

Դուբլի հեղինակ դարձաւ Լուիս Սուարեսը, աչքի ընկան նաեւ Լիոնել Մեսին, Ռաֆինեան ու Նէյմարը: Կատալոնական ակումբը 88 միաւորով շարունակում է գլխաւորել մրցաշարային աղիւսակը:

Մադրիդի «Ռեալը» տանը 3:2 հաշւով պարտութեան է մատնել «Վալենսիային»: Երկու անգամ մրցակցի դարպասը գրաւել է Կրիշտիանու Ռոնալդուն: Արքայական ակումբը 87 միաւորով բարձրացաւ երկրորդ տեղ:

Մադրիդի «Աթլետիկոն» մրցակցի խաղադաշտում չկարողացաւ յաղթահարել «Լեւանտէի» դիմադրութիւնը եւ պարտուեց 1:2 հաշւով: Դիեգօ Սիմէոնէի գլխաւորութեամբ 85 միաւորով երրորդ տեղում է:

## ԴՈՐՏՄՈՒՆԴԻ «ԲՈՐՈՒՍԻԱՆ» ՊԱՐՏՈՒԵՑ, «ԲԱՒԱՐԻԱՆ»՝ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ



Միւնխենի «Բաւարիան» չորրորդ տարին անընդմէջ հռչակուեց ֆուտբոլի Գերմանիայի ախոյեան: Բունդեսլիգայի նախավերջին տուրում միւնխենցիները լեհ յարձակուող Ռոբերտ Լեւանդովսկու դուբլի շնորհիւ 2:1 հաշւով յաղթեցին «Ինգոլշտադտին» եւ 8 միաւոր առաջ անցան երկրորդ տեղն ապահոված Դորտմունդի «Բորուսիայից», որը Ֆրանկֆուրտում նուազագոյն հաշւով պարտուեց «Այնտրախտին»: Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Բորուսիայի» մեկնարկային կազմում մասնակցեց ամբողջ հանդիպմանը:

Ախոյեանների լիգայի ուղեգրի համար պայքարող Միոնխենգլադբախի «Բորուսիան» տանը 2:1 հաշւով կամային յաղթանակ տարաւ երրորդ տեղն ապահոված «Բայերի» նկատմամբ եւ վերջին տուրից առաջ մնաց չորրորդ տեղում: 5-7-րդ տեղերը բաժանող «Շալկէն», «Մայնցն» ու «Հերտան» 3-ական միաւոր են զիջում Միւնխենգլադբախի թիմին:

«Բաւարիան» Գերմանիայի ախոյեանի տիտղոսը նուաճեց ռեկորդային՝ 26-րդ անգամ: Միւնխենցիների գլխաւոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան վերջին մրցաշրջանն է անցկացնում Բունդեսլիգայում:

## ԱՐՍԷՆ ՎԵՆԳԵՐ. ՑԱՒՈՎ ԵՄ ՆԱՅՈՒՄ «ԼԵՍԹԵՐԻ» ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆԸ

Լոնտոնի «Արսենալի» ֆրանսացի գլխաւոր մարզիչի համար ցաւալի է այն փաստը, որը Անգլիայի ախոյեանի տիտղոսը նուաճել է «Լեսթեր Սիթին»:

Մասնագէտը ցաւալի է համարում իր թիմի անյաջողութիւնները յետնապահ եւ միջին տեղեր զբաղեցնող ակումբների հետ հանդիպումներում:

«Ինձ համար իսկապէս ցաւալի է, որ «Լեսթերը» նուաճեց տիտղոսը: Պէտք է խոստովանել, որ այդ թիմը միւսներից լաւ անցկացրեց ամբողջ մրցաշրջանը: Կարծում եմ՝ «Տոտենհեմի», «Մանչեսթեր Եունայթեդի» եւ «Մանչեսթեր Սիթիի» համար եւս ցաւալի է տեսնել «Լեսթերի» յաղթանակը: Բայց ֆուտբոլն այդպիսին է: Մենք շատ վրիպումներ թոյլ տուեցինք փոքր թիմերի հետ խաղերում: Ես չգիտեմ՝ ինչու այդպէս եղաւ»,- Վենգերի խօսքը մէջբերում է Goal.com-ը:

## ՉԵԼԷՊԻԻՆ «ԽՈՍՏՈՒՄԸ»

Շարունակուած էջ 14-էն

Մուսթաֆան եւ Սաթենիկը ունեցան հինգ զաւակներ, Սուրէնէն եւ Արաքսիէն զատ՝ երեք մանչ եւ երկու աղջիկ: Մուսթաֆան մահացաւ 1959 թուականին, իսկ Սաթենիկ աւելի ուշ՝ 1963-ին: Սաթենիկ թաղուեցաւ Հայոց գերեզմանատունը՝ Պէյրութ:

«Ձեր Աստուածը շատ զօրաւոր է...»:

Բայց այս «զօրութիւնը» կեանքեր կերտելու զօրութիւն է. կեանքեր, որոնք կ'ապրին եւ կ'ապրեցնեն ու տակաւին կը վկայեն իրենց շարունակականութեամբ: Սաթենիկին, քառասուն հայ աղջիկներուն ու տակաւին շատերու կեանքերը խօսուն օրինակ են:

Բայց կը մնայ յարգանքի ու երախտագիտական բաժինը՝ Չելէպիին ու բոլոր անոնց նկատմամբ, որոնք պահեցին «խոստումը», «խոստումը»՝ մարդկային բարեկամութեան ու անոր շարունակականութեան, բայց մանաւանդ «խոստումը»՝ խիղճին ու անոր գիտակցութեան՝ թէ մարդկային կեանքերը ապրեցնելը արժէք է, որուն վրայ կը կերտուի պատմութիւն եւ քաղաքակրթութիւն:

Սաթենիկը, քառասուն հայ աղջիկները եւ արաբ Չելէպին... Տարբեր կեանքեր, որոնք միացան իրարու՝ զօրութեամբ, զօրութիւն մը, որ կեանքեր պահեց, բայց նաեւ կերտեց:

Չելէպիին «խոստումը» կեանքերը կերտելու «Խոստում»-ն է: Արժէ կառչիլ ու հաւատալ անոր:

## ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՀԱՆԴԷՍ ԵԿՈՂ 11 ՖՈՒՏՊՈԼԻՍՏՆԵՐ ՀՐԱՒԻՐՈՒԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆ



Ֆուտբոլի Հայաստանի հաւաքականի՝ ամերիկեան հաւաքի համար ազգային թիմ են հրաւիրուել արտերկրում հանդէս եկող 11 ֆուտբոլիստներ: Մայիսի 28-ին Հայաստանի հաւաքականը Լոս Անճելոսում խաղալու է Գուատեմալայի հետ, իսկ Յունիսի 1-ին՝ Էլ Սալվադորի:

Ցուցակից դարձեալ բացակայում է ամերիկեան «Ռեալ Սոլթ Լեքում» հանդէս եկող Յուրա Մովսիսեանը: Նախորդ հաւաքի համեմատ, հաւաքական չի հրաւիրուել Լիտվայի «Տրակայի» լաւագոյն ռմբարկու Դաւիթ Արշակեանը:

Գաէլ Անդոնեան, «Դիժոն» (Ֆրանսիա)
Հրայր Մկոյեան, «Էսթեղլալ» (Իրան)
Յովհաննէս Համբարձումեան, «Վարդար» (Մակեդոնիա)
Հենրիխ Մխիթարեան, «Բորուսիա» (Դորտմունդ, Գերմանիա)
Մարկոս Պիզելլի, «Ալ Ռայեդ» (Սաուդեան Արաբիա)
Արաս Օզբիլիս, «Ռայօ Վալեկանօ» (Իսպանիա)
Կամօ Մկրտչեան, «Անժի» (Ռուսաստան)
Գոռ Մալաքեան, «Ստալ» (Ուկրանիա)
Էդգար Մանուչարեան, «Ուրալ» (Ռուսաստան)
Արթուր Սարկիսով, «Վոլգա» (Ռուսաստան)
Գեղամ Կադիմեան «Կարպատի» (Ուկրանիա)

Հայաստանի առաջնութիւնում հանդէս եկող ֆուտբոլիստների ցուցակը, ինչպէս նաեւ նախապատրաստական ծրագրի մանրամասները կը հրապարակուեն աւելի ուշ, յայտնում է ՀՖՖ կայքը:

## ՖԻՖԱ. ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՂԻՒՍԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԿԱՆ

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հաւաքականը ՖԻՖԱ-ի դասակարգման աղիւսակում պահպանել է դիրքը եւ շարունակում է Սիրիայի հետ բաժանել 110-111-րդ տեղերը: Նախորդ հրապարակումից յետոյ Հայաստանի թիմը հանդիպում չի անցկացրել եւ ունի վարկանիշային 316 միաւոր:

Դասակարգման աղիւսակի լաւագոյն տասնեակում փոփոխութիւններ չկան: Առաջատարն աշխարհի փոխախոյեան Արգենտինան է, որին յաջորդում են Բելգիան ու Չիլին: Կոլումբիան չորրորդն է, իսկ աշխարհի ախոյեան Գերմանիան՝ 5-րդը:

Լաւագոյն տասնեակում են նաեւ՝ Սպանիան, Բրազիլիան, Պորտուգալիան, Ուրուգուայն ու Անգլիան:

Աշխարհի 2018թ. առաջնութեան ընտրական փուլում Հայաստանի հաւաքականի մրցակիցներից Ռումինիան 19-րդն է, Լեհաստանը ռուսների հետ բաժանում է 27-28-րդ տեղերը, Դանիան 41-րդն է, Չեռնոգորիան՝ 94-րդը, իսկ Ղազախստանը՝ 117-րդը:

ԱՄՆ-ում կայանալիք հաւաքի ընթացքում Հայաստանի մրցակիցներից Գուատեմալան 89-րդն է, իսկ Էլ Սալվադորը՝ 97-րդը:

Յիշեցնենք, որ Հայաստանի հաւաքականը յաղթանակ չի տարել նախորդ 14 խաղերում՝ սահմանելով թիմի պատմութեան հակառեկորդ:



## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ Մարտ 21-Ապրիլ 19**
Երբեմն դժուարութիւն կ'ունենաս կարգ մը բաներ միտքդ պահելու եւ շուարումի կը մատնուիս: Հարցերը շատ վերլուծելով կը կարծես թէ աւելի լաւ արդիւնքի պիտի հասնիս, սակայն երբեմն շտապ որոշումներ առնելու ես:
Բախտաւոր թիւերդ են: 2,11,19,21,31

**ՑՈՒԼ Ապրիլ 20-Մայիս 20**
Կարեկցութիւն եւ հոգածութիւն փնտռող անձ մըն ես եւ սակայն նոյն ձեւով չես վարուիր կողակիցիդ հետ: Մտքիդ մէջ թաքնուած նիւթերը շուտով պարզէ գործընկերոջդ: Լաւ ճամբորդութիւն մը ունիս կատարելիք հեռու վայր մը:
Բախտաւոր թիւերդ են: 14,21,28,31,33

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ Մայիս 21-Յունիս 20**
Յաճախ կ'աճապարես պատասխանատուութիւններդ կատարելու եւ կը մոռնաս շուրջիններուդ պէտքերը: Փափաքդ է շուտով հանգստեան կոչուիլ եւ վայելել աշխարհի գեղեցկութիւնները: Ներկայ եռանդդ մի պաղեցներ:
Բախտաւոր թիւերդ են: 4,15,20,26,28

**ԽԵՑԳԵՏԻՆ Յունիս 21-Յուլիս 22**
Տարիներով կեանքիդ մէջ ամբողջ սրտով կապուած եւ սիրած զբաղմունքդ, հիմա ալ սրտիդ բնաւ պիտի չխօսի: Զաւակներուդ հանդէպ ցուցաբերած վերաբերմունքդ լաւ օրինակ պիտի հանդիսանայ իրենց նկարագրի կերտումին մէջ:
Բախտաւոր թիւերդ են: 9,18,22,26,34

**ԱՌԻՒԾ Յուլիս 23-Օգոստոս 22**
Գործ մը որ բարոյական կորով կը հայթայթէր, յանկարծ ծանր բեռի պիտի վերածուի: Փորձառութիւններդ բաժնեկցիր զաւակներուդ հետ եւ սիրտդ բաց իրենց որ աւելի մօտենան քեզի: Քեզի տրուած պարտականութիւնները լիուլի կատարէ:
Բախտաւոր թիւերդ են: 4,12,25,32,35

**ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
Մարդիկ իրար ձգելը քեզի ուրախութիւն կը պատճառէ, բայց սխալ հասկացողութիւնները երբեմն պարզ վէճէ մը աւելի վնասակար կրնայ ըլլալ: Գործի մէջ յաջողութիւն մը բաւական շահեր պիտի ապահովէ գալիք օրերուն համար:
Բախտաւոր թիւերդ են: 8,16,24,27,33

**ԿՇԻՌՔ Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
Շատ լաւ յատկութիւն մը ունիս որ քեզ շատ կը մօտեցնէ մարդոց, այդ ալ մարդամօտ եւ շուտ մտերմացող ըլլալդ է: Զգուշացիր գաղտնիքներդ օտարներու տալէ: Սխալներդ ընդունէ եւ անկեղծ կեանք մը ապրէ: Դրամիդ յարգը լաւ գիտցիր:
Բախտաւոր թիւերդ են: 2,13,24,29,32

**ԿԱՐԻՃ Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
Իմաստութեամբ ապրիլը լաւ նկարագիր մըն է որ կը պակսի քու քովդ: Համերաշխ եղիր ընտանիքիդ անդամներուն հետ եւ հաշտութիւն կնքող: Յաճախ հակամէտ ես ինքնագով ըլլալու, որու պատճառով կը նեղես սեղանակիցներդ:
Բախտաւոր թիւերդ են: 6,17,23,28,35

**ԱՂԵՂՆԱՒՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**
Տարօրինակ շնորհքներով օժտուած անձ մըն ես եւ գործակիցիդ հետ միասնաբար աշխատելով լաւ արդիւնքներ կը յառաջացնես: Այս շաբաթ շատ այցելուներ պիտի ունենաս եւ պիտի ստիպուիս հոգալ անոնց: Եղբօրդ հետ հաղորդակցութիւնդ մի կտրեր:
Բախտաւոր թիւերդ են: 1,16,24,27,28

**ԱՅԾԵՂՋԻՒՐ Դեկտեմբեր 22-Յունուար 19**
Իրաւունքներուդ վրայ հաստատ մնացող եւ իրաւունքդ պաշտպանող անհատ մըն ես, եւ երբեմն կը նկարագրուիս որպէս վէճ սիրող անձ: Խօսակցութեանդ ոճը փոխելով` շատ բան կրնաս փոխել: Կառավարական տուգանքներէդ մի խուսափիր:
Բախտաւոր թիւերդ են: 7,17,20,26,32

**ԾՈՎԱՆՈՅՇ Յունուար 20-Փետրուար 18**
Հոգեկան մեծ կապ մը ստեղծուած է քու եւ բարեկամի մը միջեւ որուն նեղութիւններդ յայտնելով` հոգիդ կը հանդարտեցնես: Պտոյտի առաջարկ մը մտածել պիտի տայ քեզի: Կարողութիւններդ օգտագործէ լաւ բաներու համար:
Բախտաւոր թիւերդ են: 5,12,22,34,35

**ՋՈՒԿ Փետրուար 19-Մարտ 20**
Յառաջիկայ շաբաթներուն արձակուրդի առիթ մը պիտի ներկայանայ քեզի: Լաւագոյն առիթն է որ հանգչիս եւ ընտանիքիդ հետ ժամանակ անցնես: Եթէ ոեւէ անձնական մտահոգութիւններ ունիս առողջութեանդ նկատմամբ` բժիշկ մը տես:
Բախտաւոր թիւերդ են: 9,18,23,27,30

## ՍՈՎՈՐԱԿԱՆ ԻՐԵՐՈՒ ԳԱՂՏՆԻ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*1. Աղ: Այն փաստը, որ աղը հրաշալիօրէն կ'օգնէ գինիի հետքը հեռացնելու, յայտնի է շատ չա-տոնց: Իսկ գիտէի՞ք արդեօք, որ աղի օգնութեամբ կարելի է պատ-րաստել մոմ, որուն մոմանիւթը չի հալիր՝ փչացնելով ձեր սեղանը կամ գորգը: Ատոր համար անհրա-ժեշտ է նոր մոմը քանի մը ժամով թրջել աղաջուրի մէջ, իսկ յետոյ ուղղակի ձգել, որ չորնայ:*

*2. Քացախաթթու: Բացի այն, որ ջուրին մէջ լաւ բացուած քացա-խաթթուն կարելի է կիրարկել խո-հարարութեան մէջ, անիկա նաեւ ունի բազմաթիւ այլ յատկանիշներ: Օրինակ, եթէ ձեր բանջարեղէնը թօշնած է, կարելի է անոր կրկին ծաղկուն տեսք տալ՝ 10 վայրկեան դնելով ամանի մը մէջ, ուր երկու գաւաթ ջուրին խառնուած ըլլայ մէկ ճաշի դգալ քացախաթթու:*

*Այդ հեղուկի կիրարկումի տարբերակ մըն է նաեւ լուացքի մեքենային մէջ մէկ բաժակ քացա-խաթթու լեցնելը. ատիկա կ'օգնէ ամրապնդելու սրբիչներու եւ այլ գունաւոր գործուածքներու գոյնը: Վերջապէս, քացախաթթուն լայնօ-րէն կը կիրարկուի հոտերը վերաց-նելու գործին մէջ: Ապակեայ աման-ները հոտէ ազատելու համար անհ-րաժեշտ է զանոնք դնել ջուրի եւ քացախաթթուի խառնուրդի մէջ (հաւասար չափով ջուր եւ քացա-խաթթու): Իսկ որպէսզի տհաճ հոտէն ազատէք լուացարանը կամ աղբարկղը՝ անհրաժեշտ է մէկ գա-ւաթ չլուծուած թթու լեցնել եւ ձգել մէկ ժամ, յետոյ ջուրով լուալ մաքրուած մակերեւոյթը:*

*3. Վազելին: Իրականութեան մէջ վազելինը քարիւղի արտադ-րութեան կողմնակի արդիւնք է, այդ պատճառով խորհուրդ չի տրուիր զայն մորթին քսել: Փոխա-րէնը կան քանի մը կենցաղային բաղադրատոմսեր, որոնց մէջ այդ քսուքը շատ օգտակար է: Նման բաղադրատոմսերէն մէկը զայն քսելն է ներկուած եղունգներուն՝ անոնց յատուկ փայլք տալու համար:*

*4. Մեղր: Կարելի չէ նախ եւ առաջ չյիշատակել, որ մեղրը շատ համեղ է եւ օգտակար. ընդամէնը մէկ ճաշի դգալ մեղրը կրնայ ազատել խումհարի հետեւանքնե-րէն, նոյնիսկ եթէ դուք զայն ուղ-ղակի բանաք թէյի մէջ կամ քսէք չոր հացին. մեղրը կ'արագացնէ մարմինէն դուրս հանելու թունա-նիւթերը: Բայց անիկա ունի կարե-ւոր յատկութիւն մը եւս: Անոր շնորհիւ չեն կրնար զարգանալ մարմնի մէջ եղած վնասակար փոքր մարմինները: Մեղրը հրաշալի քսուք է փոքր վէրքերու բուժման համար՝ այրուածքներու, կտրուածքներու, քերծուածքներու:*

*Մեղրը նման եղանակով կի-րարկելու ընթացքին պէտք է յիշել, որ կարեւոր է վէրքը կապել:*

*5. Խնձորի քացախ: Խնձորի քացախը, ինչպէս նաեւ քացա-խաթթուն, շատ գործածութիւն-ներ կրնան ունենալ: Օրինակ՝ անոնք, որոնք կը տառապին փչտիկ-ներէ, ջուրին քիչ մը խնձորի քացախ աւելցնելով կրնան մաքրել զանոնք: Քացախը օգտակար է նաեւ մազերու համար: Անիկա կը հեռացնէ լուալէն յետոյ օճառի փոքրիկ մնացորդները: Սակայն այդ միջոցը կը համապատասխանէ միայն անոնց, որոնք իրենց մազե-րը չեն ներկեր:*

*6. Ձիթապտուղի իւղ: Ձի-թապտուղի իւղը, խոհարարութեան մէջ անվիճելի առաւելութիւննե-րէն բացի, ունի նաեւ քանի մը գաղտնի կարողութիւն: Նախ, անի-կա հրաշալիօրէն կը հեռացնէ ներ-կը: Քիչ մը իւղ քսել մորթին, իսկ յետոյ վրան աղ կամ շաքար լեցնել ու տրորել, եւ ներկը ինքն իրեն կ'անցնի, առանց որեւէ քիմիական նիւթի: Երկրորդ՝ կաթիլ մը ձի-թապտուղի իւղը հրաշալիօրէն յար-մար է կաշիէ ճտքակօշիկներու փայլեցման համար: Ձիթապտուղի իւղը կ'օգնէ նաեւ շատ տհաճ իրա-վիճակի մը. եթէ մազերուն ծամօն փակած է: Ծամօնը հեռացնելու համար մազերը առատօրէն ցօղել ձիթապտուղի իւղով եւ ձգել, որ ներծծուի: Այնուհետեւ անհրաժեշտ է խնամքով սանտրել ծամօնը եւ լուալ գլուխը:*

## ԽԱՂՈՂԻ ԿՈՒՏԸ՝ ՔԱՂՑԿԵՂԻ ԿԱՆԽԱՐԳԻԼՄԱՆ ՀԱՄԱՐ

*Բոլորին յայտնի է, որ ամենա-արագ տարածուող հիւանդութիւնը, որ տարեկան միլիոնաւոր մարդոց կեանք կը խլէ, քաղցկեղն է: Խաղո-ղի կուտը կը պարունակէ մեծ քանակութեամբ հակաօքսիտանթ, որ կը պաշտպանէ բջիջները շարք մը հիւանդութիւններէ: Դեռ հե-տազօտութիւններ կը կատարուին՝ պարզելու համար, թէ խաղողի կուտին մէջ առկայ հակաօքսի-տանթները կրնան որեւէ կերպով օգնել մարդոց:*

*Այնուամենայնիւ, եթէ կը սի-րէք խաղող ուտել, ուստի պէտք չէ կուտը հեռացնել, իսկ աւելի ար-դիւնաւէտ է խաղողի կուտի իւղին օգտագործումը:*

*-Ընկերները կարողութիւն ու-նին փոխարինելու ցաւազերծիչնե-րը:*

*-Ընկերներու առկայութիւնը իւրայատուկ ազդեցութիւն ունի՝ անիկա կը բարելաւէ ինքնազգա-ցումը:*

*Գիտնականները պարզած են, որ որքան շատ ընկեր ունի մէկը, այնքան լաւ ան կրնայ յաղթահա-րել ցաւերը:*

*Ըստ գիտնականներու կատա-րած հետազօտութեան՝ շատ ընկեր-ներ ունեցող մարդոց մօտ բարձր է էնտորֆիններու աշխուժութիւնը: Էնտորֆինները մոլեքիւլներ են, որոնք կ'արտադրուին ուղեղէն: Անոնք կը կարգաւորեն ցաւը եւ կուտան հաճելի զգացումներ: Էն-տորֆինները պատասխանատու են հասարակական կապեր ստեղծելու համար: Հետեւաբար մարդիկ, որոնք ունին ընկերային լայն կապեր, աւելի դիւրին կը տանին ցաւը:*

*Էնտորֆինները բնական ցա-ւազերծիչներ են: Անոնք նոյնիսկ աւելի ուժեղ են քան թմրանիւթը: Գիտնականները պարզած են, որ մեծ թիւով ընկերներ ունեցող մար-դիկ ցաւը աւելի դիւրին կը տանին էնտորֆիններու բարձր աշխուժու-թեան շնորհիւ:*

**www.massispost.com**
**daily news updates**

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



ԿՈՐԻՒՆ ԱՐՔ. ՊԱՊԵԱՆ

*Հոգելոյս ԿՈՐԻՒՆ ԱՐՔ. ՊԱՊԵԱՆ-ի վախճանման Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան յատուկ արարողութիւն պիտի կատարուի Կիրակի, Մայիս 22, 2016ին, Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ, 5300 White Oak Ave., յաւարտ Ս. Պատարագի:*

*Սգակիրներ՝*
*Գալուստ եւ Յասմիկ Պապեան եւ զաւակները*
*Գրիգոր եւ Մարօ Քէլէշեան եւ զաւակները*
*Տոքթ. Մհեր եւ Նինա Պապեան եւ զաւակները*
*Եւ համայն Պապեան, Պարսումեան, Քէլէշեան, Մոմճեան, Աւագեան, Սերոբեան, Նիկոսեան եւ Սթանիչ ընտանիքները, հարազատներն ու բարեկամները*

*Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի նոյն եկեղեցւոյ «Տիգրանեան» սրահին մէջ:*

Շարունակուած էջ 1-էն

*որից ճիւղաւորւում է արդէն ընթացքը: Այն ազգերն ու ժողովուրդները, որոնք ընթացքը ճիւղաւորել են հենց այն ելակէտով, թէ ինչ է պէտք անել սեփական որոշումը միջազգային հարթակում անցկացնելու համար, հասել են պետականութեան զարգացման եւ անվտանգութեան առաւել բարձր մակարդակի: Նրանք, ովքեր միջազգային հանրութիւն ասուածը դիտարկել են ոչ թէ աշխատանքի հարթակ, այլ մի մեծ դատարան կամ քաւարան եւ սեփական քայլերը հաշուարկել են հենց դրանով, մնացել են գոյապայքարի ռեժիմում, չկարողանալով դուրս գալ անընդհատ գոյութեան համար կռիւ տալու շրջանից՝ անգամ սեփական յաղթանակներից յետոյ:*

*Քանի տարի առաջ Արցախում կռուեցին կարեւոր յաղթանակներ քանի տարի անց տեղի ունեցաւ նոյնը եւ էլ աւելի սպառազինուած հակառակորդի դէմ հերոսական կռիւ տուեց արդէն անկախութեան սերունդը: Է՞լ ինչ է պէտք ունենալ սահմանին, թիկունքում արժանապատւութիւն եւ համարձակութիւն, պետականութեան փիլիսոփայութիւն ունենալու համար: Է՞լ ինչ պէտք է անեն առաջնագծում կանգնած տղաները, որ թիկունքում գտնուողները դուրս գան «քոստութեան» կենսափիլիսոփայութիւնից, ընդ որում ոչ միայն քաղաքականութեան եւ դիւանագիտութեան, այլ բոլոր ոլորտներում, որպէսզի յաղթահարեն փոքրութեան բարդոյթները, որպէսզի դնեն մեծ ու յաւակնոտ նպատակներ, արժեւորեն երազանքները:*

*Առաջնագծում կանգնողները ապահովել են ամենակարեւորը՝ թիկունքի արժանապատւութեան եւ ստեղծարար յաւակնոտութեան հիմքը, իսկ թիկունքում այդ հիմքը լցնում են հերոսական պաթետիկ ճառերով, բայց գործի «քոստութեան» հողով:*

*Հաստատապէս հնարաւոր է ասել մի բան՝ միջազգային հանրութիւնը չի հասկանայ եւ չի ընդունի այդ «քոստութիւնը», առաւել եւս տեսնելով առաջնագծի տղաների հերոսութիւնը, գործ անելու, խնդիր դնելու եւ այն լուծելու թէ պատրաստակամութիւնը, թէ կարողութիւնը:*

*Եթէ շատ մարդկանց թւում է, թէ մինչ այժմ Հայաստանն աղէտից խուսափել է միջազգային հանրութեան առաջ «անընդունելի» քայլերից «խորիմաստօրէն» եւ «ակադեմիական» հանդարտութեամբ զերծ մնալու շնորհիւ, ապա սխալւում են չարաչար: Միջազգային հանրութեան մօտ Հայաստանը պահել ու պահում են զինուորն ու սպան, որոնք գիտեն, թէ ինչ են ուզում եւ ինչ են անում: Նրանք գծում են միջազգային անվտանգութեան սահմանը, դժբախտաբար յաճախ նաեւ սեփական արիւնով: Որովհետեւ նրանց արիւնը թիկունքում վերածւում է ամէն ինչի՝ պաթետիկ բաժակաճառից մինչեւ քաղաքական երեսպաշտութիւն, բայց երբեք չի շարունակւում ինքնիշխան մտքով, որպէսզի զինուորն ու սպան պարբերաբար չմնան մենակ:*

*Իսկ նրանք մնում են մենակ, ընդ որում մնում են սարսափելի մանիպուլյացիայի հետեւանքով: Թիկունքում քաղաքական կոչուած դասը կամ այսպէս կոչուած «էլիտան» նրանց մենակ է թողնում՝ յղում անելով իբրեւ թէ նրանց իսկ անվտանգութեանը, իբրեւ թէ չուզենալով նրանց դնել հարուածի տակ, իբրեւ թէ դրա համար չեն գնում միջազգային հանրութեան դէմ: Մինչդեռ, այդ մանիպուլյացիայի հետեւանքը այն է, որ զինուորն ու սպան անընդհատ շարունակում են կանգնած մնալ մահուան դէմ, ամէն րոպէ, ամէն ժամ, որի սպառնալիքը չի թուլանում ոչ մի վայրկեան:*

www.massisweekly.com
Updated every Friday

## «ՀԱՅՐԻԿ, ՀԱՅՐԻԿ»

Շարունակուած էջ 8-էն

*Վանի առաջնորդ: Հոն կը գործակցի Մկրտիչ Փորթուգալեանի հետ, որուն պատճառով յեղափոխութեան համակիր նկատուելով կառավարութեան կողմէ կը հրահանգուի վերադառնալ Պոլիս (1885), որմէ ետք՝ կ'աքսորուի Երուսաղէմ՝ գտնուելով խիստ հսկողութեան տակ: «Հայրիկ շուտով պիտի մեկնէր Երուսաղէմ: Լրտեսներու ցանցը կը հետեւէր անոր մեկնումի պատրաստութեան»: Պոլիս եւ ետքը Երուսաղէմի մէջ հնչակեաններ կը համոզեն փրկել զինք ու փախցնել Եւրոպա, սակայն Հայրիկ կը մերժէ: Թաքուն կապ պահողն ու գործը կազմակերպողը կ'ըլլայ Ռուբէն Խանազատ: 1892 Մայիս 5-ին Խրիմեան կ'ընտրուի կաթողիկոս ամենայն հայոց՝ համընդհանուր խանդավառութիւն պատճառելով ամէնուրեք: 1893-ին կ'ուղղուի Էջմիածին՝ անցնելով Եգիպտոսէն, եւրոպական ոստաններէ, Օտեսայէն, Պաթումէն Թիֆլիս եւ ապա Մայր Աթոռ: Կաթողիկոսական օծումը 1893 Սեպտեմբեր 26-ին:*

*Հատորին երրորդ մասը գահակալութեան տարիներն են (էջ 245-291), որուն ընթացքին ամենաուշագրաւը անոր խիզախ ընդդիմութիւնն էր ցարական իշխանութիւններուն՝ հայ եկեղեցւոյ կալուածներուն բռնագրաւման որոշումին կապակցութեամբ (1903 թ.):*

*Հայրիկ կը վախճանի 29 Հոկտեմբեր 1907-ին:*

*Հատորը ունի «Յաւելուած» բաժինը, ուր կը գտնէք Խրիմեան Հայրիկի գրական աշխատութեանց ցանկը՝ թուականներով, անոր կենսագրութեան ժամանակագրութիւնը, անոր պատրիարքութենէն հրաժարականի պատմական ելոյթը, ծանօթագրութիւններ եւ հատորին յատուկ անուններուն այբբենական ցանկը: Արա Ակինեանի այս գործը կը միանայ Հայրիկին նուիրուած հատորներու շարքին.- Հայկ Աճէմեան «Հայոց Հայրիկ» (Թաւրիզ, 1927), Թորգոմ Եպս. Գուշակեան «Խրիմեան Հայրիկ» (Փարիզ, 1925 եւ Անթիլիաս, 1990), Գ. Գիւզալեան «Խրիմեան Հայրիկ. Գաղափարների Աշխարհը» (Պէյրութ, 1954) եւ Էմմա Կոստանդեան «Մկրտիչ Խրիմեան Հասարակական-Քաղաքական Գործունէութիւնը» (Երեւան, 2000):*

*Իսկ ո՞վ է սոյն աշխատութեան գրեթէ անծանօթ հեղինակը՝ Արա Ակինեան: Ան ծնած է 1908-ին Սամսոն. 1915-ին կորսնցնելով հայրը կ'ապաստանի Հալէպ: Նախնական կրթութենէ ետք Հալէպի մէջ՝ 1920-ին կը փոխադրուի Պոլիս, միջնակարգի ուսումնառութենէն ետք կ'անցնի Ռոպերթ գոլէճ որմէ շրջանաւարտ կ'ըլլայ 1932-ին՝ առեւտրական բաժինէն: Կ'աւարտէ Պոլսոյ համալսարանին իրաւաբանական բաժինը 1937-ին: Կը պաշտօնավարէ «Ճումհուրիյէթ» օրաթերթին մէջ եւ միաժամանակ կ'աշխատակցի «Ժամանակ» օրաթերթին՝ մասնակցելով նաեւ խմբագրական կազմին: Կը մահանայ 1976-ին՝ թողնելով գրական վաստակ մը «Ժամանակ»ի էջերուն մէջ ցրուած:*

## ԴՈԿՏ. ՀՐԱՆԴ ԱՃԷՄԵԱՆ

Շարունակուած էջ 13-էն

*լով եւ երաժշտութեան մէջ հմուտ ըլլալով, սրտի խօսքով շնորհաւորեց Դոկտ. Աճէմեանը «այս մեծղի գործին համար»:*

*Եկեղեցւոյ փայլուն երգիչներէն Միքայէլ Արապեան շատ գեղեցիկ ձեւով երգեց Սահակ Զօրափորեցի Կաթողիկոսի «Ուրախ Լեր» շարականը, որ եկեղեցւոյ ուրախ առիթներուն եւ հարսանիքներուն միշտ կ'երգուի այս շարականը, խռովելով ներկաներուն հոգիները: Բոլոր երգերուն երգեհոնով կ'ընկերանար՝ երիտասարդ Արէն Շահճահանեան:*

*Վերջաւորութեան, Դոկտ. Աճէմեան շատ ջերմ եւ երախտապարտ խօսքերով շնորհակալութիւն յայտնեց Կազմակերպիչ Յանձնախումբին, ներկայ բարձրաստիճան կղերականներուն եւ առաքինազարդ քոյր Լուսիայի, իրենց ներկայութեան եւ խօսքերուն համար, եւ յայտագրի գեղարուեստական բաժնի հոյակապ արուեստագէտներուն:*

*Փակման խօսքը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը՝ Արհի. Միքայէլ Եպս. Մուրատեան, որ ներշնչեալ խօսքերով հայ եկեղեցւոյ շարականները նկատեց հայ ժողովուրդը միացնող, շաղկապող եւ օղակող ուժ եւ ջերմօրէն շնորհաւորեց հեղինակը այս գործին համար:*

*Եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբի անդամուհիները շատ ճոխ հիւրասիրութիւն մը կազմակերպած էին:*

*Մենք ալ մեր հերթին կը շնորհաւորենք Դոկտ. Հրանդ Աճէմեանը այս հատորին համար, մաղթելով եւ խնդրելու պէս առաջարկելով որ աւելի յաճախականութեամբ իր յօդուածները տեսնենք եւ կարդանք Լոս Անճելըսի հայ մամուլի մէջ, վայելելու համար անոր մեղրահամ հայերէնը:*

JOB OPPORTUNITY
NOUBARS EL ADOBE PHARMACY
Part time delivery driver needed from 3-8pm M-F
Must have a good driving record and own a car.
Armenian and English required so
Call Vic 1(323) 461-1502

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
35
ԱՄԵԱԿ

Կազմակերպութեամբ՝ «Մասիս»-ի Օժանդակ Մարմինի

Մասիս Շաբաթաթերթի 35րդ Ամեակի

## ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

**Շաբաթ, 4 Յունիս, 2016**

Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ

ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ
ԼԻՒԴՈՎԻԿԱ ԵՒ ՅԱԿՈԲ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ ՍՐԱՀ
117 S. Louise St., Glendale, CA 91205

Երեկոն կը Խանդավառէ
ՎԱՀԷ ՅԱԿՈԲԵԱՆ
եւ իր Նուագախումբը

Տոմսերու համար հեռաձայնել 626•755•4773

Մուտքի Նուէր՝ $75.00

